№ 40 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՓԵՏՐՎԱՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՓԵՏՐՎԱՐԻ № 40

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիս 10 ռուբ.	10 ամիս 9 ռուբ.	9 ամիս 8 ռուբ.	8 ամիս 7 ռուբ.	7 և 6 ամիս 6 ռուբ.	5 ամիս 5 ռուբ.	4 ամիս 4 ռուբ.	3 ամիս 3 ռուբ.	2 ամիս 2 ռուբ.

Փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և թէ 40 կոպ. նամականիշ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ռ. բաժանորդավճարը կը ստանան որպէս պրեմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանչվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Պուշկինսկայա փող. վրա, Ուղղափ. Հոգևոր Սեմին. նախկին շին. մէջ

—✦ ԲԱՑՎԱԾ Է ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՆՈՐ ✦—

ՃԱՇԱՐԱՆ „ՕՍՏԵՐԻԱ"

ուր պատրաստվում է ամեն օր, կարգ իւղից, ամեն տեսակ ուտելիք թէ եւրոպական և թէ ասիական, նոյնպէս և՝ ԽԱՐՉՕ, ԳՕՄԻ և ՍԱՑԻՎԻ։

Ամեն օր կարելի է ձեռք բերել թաժ պիրօժօկներ.

Բուֆէտին կից կայ բիլլիարդ։ Բոլոր ուտելեղէնները պատրաստվում են փորձված խոհարարի հսկողութեան ներքոյ։ Մաքրութիւն, ծառայողների քաղաքավարի վերաբերմունք և ամեն տեսակ յարմարութիւն։

Յարգանքով՝ Ընկ.
(Վ. Ե. Ծէրեթելի
(Ի. Ս. Արաբիձէ
(Վ. Ս. Թօպուրիա.

տ. 104. 2—2

Չորեքշաբթի, փետրվարի 25-ին, երեկոյեան ժամը 7-ին

Թիֆլիսի Քաղաքային Դումայի դահլիճում

նշանակված է

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

անդամների արտակարգ ընդհանուր ժողով, որի քննութեան առարկան պէտք է լինի մարտի 1-ին Էջմիածնում կայանալիք համագումարին մասնակցելու խնդիրը հայ փախստականների ներկայ և ապագայ վիճակի մասին։

Ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը և հարցի կարևորութիւնը, խնդրվում է անդամներին անպատճառ ներկայ լինել ժողովին։ տ. 105. 2—1

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

(Հեռագիր)

Հին-Նախիջևան, 21 փետրվարի

Թաւրիզից ստացված տեղեկութիւնների համաձայն, Ուրմիայում մնացած ասորիները և հայերը, որոնց ապաստան է տուել ամերիկական միսիան, սարսափելի վիճակի մէջ են։

Մի եկեղեցում փակվել են 2000 հոգի, որոնցից օրական մեռնում են 12 մարդ։

Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն, որպիսին ես տեղ կը հասցնեմ Թաւրիզի ամերիկական հիւպատոսի և հայ քահանայի միջոցով։

Ներսէս եպիսկոպոս

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

22 փետրվարի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Փետր. 21-ին ռազմական գործողութիւնները Անդրճորոխեան շրջանում և Խոյից դէպի հարաւ շարունակվեցին։

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ։

ԴԱՐԴԱՆԷԼԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 փետրվարի

ՓԱՐԻԶ.—Ծովային մինիստրութիւնը յայտնում է փետրվարի 20-ի ցերեկը.

«Երեք զրահանաւ ռմբակոծեցին Սարոսի ծոցից Գալլիպօլի թերակղզու վրայով Կիլիդ-բահր հրուանդանի վրա գտնվող թիւրքական բերդերը, որոնք պաշտպանում են նեղուցի եւրոպական ափը, և այդ հրուանդանի ու Չանակի հրուանդանի միջև գտնվող նեղ անցքը։ Կրակում էին Դարդանէլի մուտքի մօտ կանգնած չորս զրահանաւ։ Ռմբակոծութեան հետևանքը չափազանց բաւարար է. բերդերից մէկի վառօդային պահեստը պայթեց։ Ոչ մի ռազմանաւ չը վնասվեց»։

Զինուորական մինիստրութիւնը յայտնում է. «Ի նկատի ունենալով Դարդանէլի դրութիւնն ու ամեն պատահականութեան պատրաստ լինելու անհրաժեշտութիւնը, կառավարութիւնը վճռել է կենտրոնացնել Հիւսիսային Աֆրիկայում մի զօրաբանակ։ Զօրքերը պատրաստ են լինելու ծով մտնել առաջին իսկ հրամանով՝ գնալու համար այնտեղ, ուր հանգամանքները կը պահանջեն նրանց ներկայութիւնը»։

ԼՈՆԴՈՆ.— Ծովակալութիւնը պաշտօնապէս հաղորդում է փոխ-ծովակալ Կարդէնի նոր հաղորդագրութիւնը Դարդանէլում կատարվող ռազմական գործողութիւնների մասին։

Փետրվ. 18-ին մինչև ցերեկվայ ժամը 2-ը անկարելի էր որևէ գործողութեան ձեռնարկել։ Այդ րոպէից, չը նայած որ եղանակը դարձեալ աննպաստ էր, վերսկսվեց Դարդանէլի բերդի և նրան մերձ գտնվող մարտկոցների ռմբակոծութիւնը։ Այդ մարտկոցների կրակը առաջվանից աւելի թոյլ էր։

Ծովային աէրօպլանները երևան հանեցին մի քանի բանակավայրեր ու 2 մշտական ամրոց։

Փետրվարի 19-ին հրաշալի եղանակ էր և նաւատորմը շարունակեց ուժեղ կրակով կործանել թշնամու բերդերը։ Զօրամասերը, ծովային գնդերի պաշտպանութեամբ, ափ իջան Կում-Կալէի և Սէյդ-իւլ-Բահրի մօտ և սկսեցին ճանապարհ բանալ դէպի ծոցի մուտքը, ոչնչացնելով Կորնֆելդի 4 թնդանօթ։ Երկու ափերում տեղի ունեցան մանր ընդհարումներ։ Պարզվեց, որ մերձակայ գիւղերը լի են թշնամու խոշոր ույժերով։

Միւնոյն օրը, երեկոյեան դէմ, «Սապֆիրը» լռութեան մատնեց դաշտային թնդանօթների մի մարտկոց Էդրամիդի ծոցում՝ Դիկիլից դէպի հիւսիս, իսկ «Պրէնս-Ջորջը» ռմբակոծեց Բէզիկէի մօտի ամրութիւնը։

Փետրվ. 19-ին անգլիացիք կորցրին 19 սպանված, 25 վիրաւոր և անհետ կորած։

Ծովակալութիւնը հաղորդում է. «Փետրվարի 20-ին «Կինգ-Ելիսաբէտը» սկսեց նեղուցների ռմբակոծութիւնը, պաշտպանութիւն գտնելով «Ինֆլէկսիբլ» և «Պրէնս-Ջորջ» ռազմանաւերից։ Կրակն ուղղված էր Րումիլիէ Մէջիդիէ և Ակ-Թաբիա բերդերի դէմ։ «Կինգ-Ելիսաբէտ» զրահանաւը կրակեց 29 համազարկով, որոնք տուին բաւարար հետևանք։ Լ. կարևոր բերդի ռազմամթերքների պահեստատեղին պայթեց. Մնացած բերդերը վնասվեցին։

«Ինֆլէկսիբլի» և «Պրէնս-Ջորջի» կրակին հսկում էին Դարդանէլի ներսի կողմից չորս ռազմանաւ, որոնք ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցին ծածկված մարտկոցները մինչև այն րոպէն, երբ «Սապֆիրը» կրակ բացեց թիւրք զօրքերի վրա Էդրամիտի ծոցի շրջակայքում և ոչնչացրեց պատերազմական Տուզ-բուրնու կայարանը»։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Պալատում պատգամաւոր Կուզան դիմեց կառավարութեանը հարց տալով դաշնակիցների՝ Դարդանէլ մտնելու առիթով և Ռումանիայի միջամտութեան մասին։ Պատգամաւորը հարցրեց, թէ ինչպիսի միջոցներ ձեռք կառնէ կառավարութիւնը նրա համար, որպէսզի ապահովէ Ռումինիայի շահերը։

Պատգամաւոր Անտոնէսկօն հարցապնդեց, թէ ինչպիսի վերաբերմունք ունի կառավարութիւնը դէպի այն մեծ պետութիւնը, որ մտադիր է գրաւել նեղուցները։

Պատգամաւոր Ժորգան հարցրեց, թէ ինչու կառավարութիւնը թոյլատրում է ունգար լրագիրների և բրօշիւրների ներմուծումը, որոնք սպառնալիք են պարունակում Ռումինիայի անէկսիայի դէմ, մինչդեռ ռումինական լրագիրները Ունգարիայում արգելված են։ Պատգամաւորը հարցնում է, թէ ինչ միջոցներ է մտադիր ձեռք առնել կառավարութիւնը այն լրագիրների դէմ, որոնք նպաստ են ստանում օտարազգի միսսիաներից, պահանջում է արտաքսել այդ լրագիրների խմբագրական կազմի մէջ եղող օտարազգիներին։

ՓԱՐԻԶ.—«Petit Journal»-ի մէջ Պիշօնը ասում է. «Հարկաւոր է ուղարկել մեծաթիւ զօրաբանակ և ընտրովի զօրք Դարդանէլ, որոնք կարող լինեն արագացնել լիակատար յաղթութիւնը»։

Դաշնակից նաւատորմը գրաւել է Դարդանէլում Կում-Կալէ և Սէյդ-իւլ-բահր բերդերը։

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 փետրվարի

ԼՈՆԴՈՆ.—Օստ-Ինդեան նաւատորմի հրամանատարը կէսօրից յետոյ եւ երկու ժամ շարունակ ռմբակոծեց Զմիւռնիայի Ենի-կալէ բերդը, որին կպան 32 ռումբ, որոնք և լուրջ վնասներ պատճառեցին թշնամու ամրութիւններին։ Թշնամին չէր պատասխանում։

«Եուրիալուս» յածանաւի կրակը անհամեմատ շեշտակի էր։

Այժմ սկսվել է ռմբակոծութիւն մօտիկ տարածութիւնից։ Եղանակը շատ լաւ է։

Զմիւռնիայի ամրութիւնները ոչնչացնելը անհրաժեշտ է ներկայանում պատերազմական գլխաւոր գործողութիւնների աջողութիւնների համար։

ԱԹԷՆՔ.—Զմիւռնիայից տեղեկացնում են, որ ուրբաթ օրը, ցերեկվայ ժամը 11-ին, անգլիական երկու դրէդնօուտ և մի զրահանաւ ուրիշ 5 ռազմանաւերի ուղեկցութեամբ մտան Զմիւռնիայի ծոցը և ռմբակոծեցին Ենի-կալէ բերդը և ծովափի ամրացած կէտերը, նաև Երկու Եղբայր կոչված լեռը։ Ազգաբնակութիւնը սարսափահար փախչում է երկրի խորքը։ Ամբողջ ծովափը, սկսած Դարդանէլի մօտից մինչև Զմիւռնիա, ենթարկվեց ռմբակոծութեան։

ՍՕԼՈՒՆ.—Միտիլէնից և Սամոսից հեռագրում են, որ անգլօ-ֆրանսիական նաւատորմը ռմբակոծել է Զմիւռնիան։

ՓԱՐԻԶ.—Ծովային մինիստրութիւնը յայտնում է փետրվարի 20-ի ցերեկը. «3 զրահանաւ ռմբակոծեցին հեռու տարածութիւնից Ենի-կալէ բերդը՝ Զմիւռնիայի ծոցի մուտքի մօտ։ Բերդը խիստ փչացել է և չէր պատասխանում դաշնակիցների կրակին»։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 փետրվ.

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ «Բանկ-Օտտոմանը», «Դէյտշէ-Բանկը» և «Բանկ-Ֆիրէյնը» իրանց գումարները փոխադրեցին Կոնիա։ Բոլոր գերմանացի օֆիցերները իրանց արժէքաւոր իրերը ուղարկել են Գերմանիա և պատրաստել են անցագրեր ընտանիքների համար։

Չը նայած լրագիրների հերքման, իսկապէս երկու անաջող մահափորձ է կատարվել Թալէաթ-բէյի կեանքի դէմ։ Բազմաթիւ ձերբակալվածների թւումն է սուլթանի քրոջ տղան՝ Ջէլալ-էդդինը։

Սուլթանի անձնական գոյքն ու տնային կահ-կարասին փոխադրված են Կոնիա։

ՍԱԼՈՆԻԿ.—Կ. Պոլսից եկողները ճշգում են այն տեղեկութիւնները, որ Իշխանաց կղզիները սաստիկ ամրացնում են, մանաւանդ Պրինկիպօ կղզին։

—

(Լրագիրներից)

✦ Թիւրքերը «Գէբէնից» իջեցրել են 12 թնդանօթ և դրել են նեղուցների անհամեմատ նեղ մասում։

✦ «Գէբէնը» զինաթափ է արված։ Թնդանօթները դրված են Նագարայում։

✦ Դաշնակիցները ափ են իջեցնելու 60,000 զինւոր։ Գալլիպօլիում Թիւրքերը կենտրոնացրել են 130,000 զինւոր։

✦ Թիւրքաց գանձատունը մեկնել է Կ. Պոլսից։

✦ Դարդանէլը 20 կիլօմետր մաքրված է ականներից։

✦ Դաշնակից նաւատորմը առաջացել է նեղուցով 12 կիլօմետր։

✦ Բեռլինի Թիւրքաց դեսպանը մեկնել է խորհրդակցութեան համար գերմանական գլխաւոր բանակը։

✦ «Ут. Р.»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ ֆօն-դէր-Գօլց-փաշայի նախագահութեամբ կայացած զինուորական խորհրդակցութիւնը վճռել է դադարեցնել Եգիպտոսի արշաւանքը և զօրքերին մայրաքաղաք կանչել։

✦ Սիրիայում և Հայաստանում գտնվող գերմանական օֆիցերները ետ են կանչվել Կ. Պոլիս։

✦ Դաշնակից նաւատորմի մուտքը Մարմարա ծովը սպասվում է երեք շաբաթից յետոյ։ Դեսանտը արդէն իջեցվում է։

✦ Ութը ռազմակիր նաւ ռմբակոծեցին Կիլիդ-իւլ-Բահրը։ Զօրք է իջեցված Քսերօս կղզին։ Կ. Պոլսում կենտրոնացված է 200 հազար զօրք։ Թիւրքաց բոլոր նաւերը գտնվում են Դարդանէլում, բացի «Բրեսլաուից»։ Հնարաւոր է, որ նրանց բոլորին էլ խորտակեն նեղուցը գրաւելու նպատակով։ Թիւրքերը չունեն ստորջրեայ նաւեր։ Սուլթանը, իշխանները և մի քանի մինիստրներ մեկնել են Բրուսսա։

✦ Կ. Պոլսից Թիւրքաց կառավարութիւնը պատրաստվում է մեկնել։ Երեք գնացք կազմ-պատրաստ կանգնած են։ Գերմանացիք խորհուրդ են տալիս մայրաքաղաքը փոխադրել Ադրիանուպոլիս, յուսալով Բուլգարիայի բարեկամութեան վրա։

✦ Կ. Պոլսից հաղորդում են, որ երիտասարդ-թիւրքերը դրութեան լրջութեան մասին խորհրդակցեցին Աբդիւլ-Համիդի հետ։ Էկս-սուլթանը ասաց, որ գերմանացիք դիտմամբ են թոյլ պաշտպանում Դարդանէլը, կամենալով շուտով հաշտութիւն ձեռք բերել։ Այդ պատճառով աւելի լաւ է հաշտութիւն կնքել գերմանական վայրագութեան հետևանքներից առաջ։

ԻՍԿԱՊԷՍ ԴԺՈԽՔ

(Սեփական թղթակցից)

I

Ուրմին գտնվում է տափարակի վրա, որի մօտից անցնում է Շահար-չայ գետը, որը ոռոգելով բազմաթիւ գիւղեր և քաղաքի այգեստանը՝ գալիս թափվում է Ուրմի լիճը։ Իսկ քաղաքի հիւսիսային կողմը գտնվում են Բարանդուզ-չայը և Նազլի-չայը, որոնք ոռոգելով դաշտավայրի գիւղերը՝ Ուրմիի հիւսիսից գալիս-թափվում են նոյնպէս Ուրմի լիճը, որը այնքան դառն է, որ իր մէջ ոչ մի կենդանութիւն կամ ձուկ չունի։

Այս երեք գետերի ափերին 18-դ դարում ապրում էին աւելի քան 120 գիւղ հայեր, որոնք կոտորվելով և գաղթելով մնացել էին ընդամենը 8—10 գիւղ. մի քանի գիւղ էլ խառն են ապրում ասորիների հետ։ Իսկ այդ շրջանում բնակութիւն հաստատել են 60-ի չափ ասորի գիւղեր, որոնք պահպանել էին իրանց գոյութիւնը անցեալ դարերում միայն լեռնային բարձունքներում։ Քրիստոնէութեան այս մնացորդ տարրի վերջին տառապանքը ուզում ենք նկարագրել ընթերցողին ինչպէս թիւրքերի, նոյնպէս և քիւրդերի հալածանքից։

Երբ ռուսական հիւպատոսները հեռացան Սօուչ-Բուլաղից և Ուրմիից, քիւրդական հրոսակների ընդհանուր կառավարիչ և հրամանատար նշանակեցին օսմանցիները Գարնի աղա Մանգուրին, որը բռնութեամբ իւրացրել էր ցեղապետութիւնը և սարսափ սփռել ամեն կողմ։ Դեկտեմբերի 22-ին օսմ. զունդը և Գարնի աղա Մանգուրը մտան Ուրմի և քաղաքի վրա օրական 1500 թուման հարկ դրին և ստանում են ամեն օր։

Դեռ Ուրմի չը հասած, մանգուրները Գարնի աղայի հետ մտան Կաշկա-Գեադուկ կիրճը, ուր ժողովուրդը ապահովութեան համար ընդունել էր զէնք և պատրաստութիւն ռուսներից, մօտաւորապէս 1000 բերդանկա, որ պաշտպանվեն. ճշմարիտ որ չորս օր քաջութեամբ պաշտպանվեցին, բայց 5—7000 քիւրդ անխիղճ հրոսակներին դիմադրել անհնարին էր։ Մանաւանդ որ նրանք գործածում էին նոյնպէս օսմ. գնդացիր և թնդանօթ։

Քիւրդերը կռւելով Կաշկա-Գեադուկի հայերի և ասորիների հետ՝ նրանց փախցրին և մտցրին Գեօյ-Թափա գիւղը, ուր քաղաքից 4 վերստ հեռաւորութեան վրա նրանց դիմաւորեց dr. Pakard-ը, Ուրմիի ամերիկական կրօնական միսիայի աւագը, որն Ուրմիում վերատեսուչ է բժշկական դպրոցի։ Այստեղ՝ Գեօյ-Թափայում կաշկա-գեադուկցի հայ և ասորի քաջերը ամբողջ երկու օր կռւեցին, մինչև սպառեցին իրանց վերջին գնդակը։ Dr. Pakard-ը առաւ նրանց զէնքերը, յանձնեց Գարնի աղա Մանգուրին և կռւողներին ազատեց մահից, տարաւ քաղաք և մտցրեց ամերիկական դրօշակի տակ։

Dr. Pakard-ը Գեօյ-Թափայի դիրքերում համրել էր 70 ընկած հայ և ասորի կտրիճների դիակներ, որոնք իրանցից երեք անգամ աւելի շատ քիւրդ ու թիւրք էին գլորել։ Բայց անզուսպ քիւրդերից պաշտպանվելը էժան չէ նստել ամերիկացիներին. նրանք ամեն օր իրանց միսսիայի վրա յարձակվող աւազակ քիւրդերից ազատվելու համար՝ պարտաւոր են մի-երկու հարիւր թուման վճարել քիւրդ ցեղապետներին և իրանց դռներից հեռացնել։

Կաշկա-Գեադուկից միայն քաջերը չեն փոխադրվել Ուրմի, այլ Գեօյ-Թափա, Արդիշա-Թաքեա, Ալիաբադ և ուրիշ գիւղերից 12,000 հոգի ասորի և հայ ապաստանել են ամերիկական միսսիայում, ուր նրանց սոսկ հաց տալու համար միսսիան օրական ծախսում է աւելի քան 5000 ղրան (560 ռ.)։

Կրօնական միսսիային պաշտպանում է ամերիկական փոխ-հիւպատոսը՝ dr. Wiliam Schedd-ը, որը նոյնպէս իր դրօշակը տեղափոխել է այդ հիմնարկութեան վրա, որ հնար ունենայ փրկել փախստականներին։ Միայն բողոքական Պրէսբի-Թիրիան եկեղեցու մէջ տեղաւորված են 2000 հոգի փախստական, ուր գիշերում են բոլորը միասին։ Պէտք է իմանալ, որ այդ եկեղեցին շինված է միայն 500 հոգու համար։ Ուստի այնպէս ապականվում է այդտեղ օդը, որ հիւանդութիւններ առաջանալու պատճառ է դարձել։ Առաջին օրը այդտեղ հիւանդացել և մեռել են 20 հոգի, որոնց թիւրքերի և քիւրդերի ահից 16 օր չեն կարողացել թաղել։ Թէ այդ ապականված օդում ինչե՞ր կարող են առաջանալ, նկարագրելու հարկ չը կայ։

Միայն օսմանցի զօրքն ու քիւրդը չեն տեղական քրիստոնեայ ազգաբնակութեան տանջողները, այլ նոյնիսկ շիաները միացել են թշնամուն և ստիպում են, որ քրիստոնէութիւնից հեռանան թշուառները։ Աբդուլլահ-քէնդի ժողովրդին, որ ապրում է ծովափում, Նազլի գետի մօտ, ստիպելով մտցրել են մզկիթ և բռնի մուսուլմանացրել են։ Նրանցից մէկը՝ կաթոլիկ Ղաշա-մուշին (քահանայ) դիմադրել է, իրան սպանելու ձգտողներից ժամանակ է խնդրել, վերջին աղօթքը կատարել ու սպանվել է անգութների գնդակից։

Այս գիւղում մի հարսի սկեսրոջն սովորեցնում են, որ մօլլայի մօտ թոյլտուութիւն տայ հարսին՝ մի Թուրքի հարճ դառնալու։ Երբ նա պնդում է, թէ որդին կարող է շուտով Ամերիկայից դառնալ և կնոջը պահանջել, նրան պատասխանում են, որ գայ Թուրքանայ և երեք Թուրքի աղջիկ առնայ իր կնոջ փոխարէն։

Ասրպետ Զուլֆա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

21—22 փետրվ.

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նեմանի ձախ ափում գերմանացիք ետ մղվեցին Սիմնօ կայարանից այն կողմը և Լէյպունի շրջանում։ Նարեվի աջ ափում խոշոր փոփոխութիւն չեղաւ զօրադիրքերի մէջ։

Լոմժայի ճանապարհների վրա յամառ կռիւներ են, ուր մենք ձեռք ձգեցինք 7 գնդացիր։

Վիսլայի ձախ ափում, Պիլիցա գետի շրջանում, փետրվ. 20-ին գերմանացիք յարձակում գործեցին մեր դիրքերի դէմ Դոմանցեվիցէ գիւղի մօտ։

Կարպատներում աւստրիացիների անաջող յարձակումները Բէլգորոդի ուղղութեամբ շարունակվում են։

Արևելեան Գալիցիայում մենք, վանելով աւստրիացիներին իրանց ամուր դիրքերից և գերելով հարիւրաւոր մարդ, շարունակում ենք առաջանալ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն զօրահրամանատարի շտաբի կողմից.

Մեր առաջխաղացումը Նեմանի ձախ ափում և Գրօդնայի հիւսիս-արևմտեան ճանապարհների վրա շարունակվում է։ Մեր զօրքերը ետ մղեցին գերմանացիներին Սոպօցկին-Լիպսկ զօրաճակատից այն կողմը և եռանդով առաջանում են։ Նոյնպէս Մլավայի ուղղութեամբ մեր յարձակումներն աջողութեամբ են անցնում. օրվայ ընթացքում այստեղ մենք գերի բռնեցինք մօտ 500 հոգու 7 օֆիցէրի հետ և ձեռք ձգեցինք 3 գնդացիր։

Վիսլայի ձախ ափում, Պիլիցայի շրջանում, կռիւն ընդունում է աւելի խոշոր չափեր։

Կարպատներում, Օնդավայի և Սանի միջև, աւստրիացիների յարձակումները շարունակվում են։ Լիւգօվիսկից դէպի հարաւ-արևմուտք փորձեցին անցնել Սանի աջ ափը, սակայն լոյս փետրվ. 21-ի գիշերը գործած փոխ-յարձակումով, Սանը անցած աւստրիական զօրամասերը սրի քաշվեցին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սվինդմիկի շրջանում փետրվ. 20-ին աւստրիական մի զօրամաս նետվեց դէպի մեր դիրքերը՝ ունենալով իր առաջ օֆիցէրների և ծածանելով սպիտակ թաշկինակներ. թշնամին նրանց ետևից ուժեղ կրակ բացեց գնդացիրներից. 50 զինուոր և 1 օֆիցէր կարողացան փախչել և թաքնվել մեր խրամատներում։

Կարպատներում տեղի ունեցած կռիւներում աւստրիացիք վերջին ամիսը կորցրել են հարիւր հազարաւոր զինուոր։

Արևելեան Գալիցիայում և Բուկովինայում մեր զօրքերը, անցնելով Դնեստրը Զալեշչիկ գիւղի մօտ, ետ են մղում աւստրիացիներին այդ կողմից նոյնպէս։

Աւգուստովի անտառի մօտ մեր զօրքերն աջողութեամբ առաջանում են։

Օսովեցի մօտ մենք վանեցինք գերմանացիների երկու յարձակում։ Օսովեցի թնդանօթները կրակում են աջողութեամբ։

Պիլիցայի ձախ ափում տաք կռիւ է տեղի ունենում 10 վերստ երկարութեան վրա։ Մեր մի քանի հակայարձակումները բարեբար ազդեցութիւն ունեցան կռւի ընթացքի վրա։

ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 փետրվ.

ԱԹԷՆՔ.—Մինիստրների խորհրդի նիստում մասնակցում էին Վենիզելօսը, Տէօտօկիսը, Դրագումիսը և Ռալլիսը։ Հիւանդութեան պատճառով չը մասնակցեցին մինիստրներ Զաիմիսը և Մաւրոմիխալիսը։

Վենիզելօսը նորից պարզեց իր կարծիքը այն քաղաքականութեան նկատմամբ, որ վարելու է յունաց կառավարութիւնը։ Նրան յաջորդաբար պատասխանեցին Տէօտօկիսը, Դրագումիսը և Ռալլիսը։

Թագաւորը շնորհակալութիւն յայտնեց ներկայ եղողներին և փակեց նիստը։

Գեներալ շտաբի պետ Դուսմանիսը նոյնպէս ներկայ էր նիստում։

Ամբոխը ցնծութեամբ ողջունեց Վենիզելօսին՝ պալատից դուրս գալու ժամանակ։

ՍԱԼՕՆԻԿ.—Մամուլը և ազգաբնակութիւնը ցնծութեամբ ողջունում են այն տեղեկութիւնը, թէ Յունաստանը մտադիր է դուրս գալ չէզոքութիւնից և անհամբեր սպասում են պատերազմի յայտարարութեան։

ԱԹԷՆՔ.—Թագաւորի հետ տարաձայնելու պատճառով՝ քաղաքականութեան հարցերի առիթով, հրաժարական տուեց Վենիզելօսը։

ՍՕԼՈՒՆ.—Աթէնքում Գերմանիայի, Աւստրիայի և Թիւրքիայի դեսպանները խնդրեցին Միացեալ-Պետութիւնների դեսպանին իր հովանաւորութեան տակ առնել իրանց հպատակներին և պաշտպանել նրանց շահերը և պատրաստվեցին մեկնելու Յունաստանի զօրահանութեան դէպքում։

Ժողովրդական ամբոխները Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Բէլգիայի և Սերբիայի դրօշակներով անցան Սոլունի փողոցներով՝ երգելով ու բացագանչութիւններ անելով ի պատիւ երրեակ համաձայնութեան և պատերազմի։ Ցուցարարները, կանգ առնելով ռուսաց հիւպատոսարանի առաջ, աղաղակում էին՝ «կեցցէ Ցարը»։ Հիւպատոսարանի կառավարիչը հակիրճ ճառ արտասանեց։

Սոլունի զօրքերը պատրաստ են գնալու կռւի դաշտը։

—

(Մասնաւոր հեռագիր)

ՍԱԼՕՆԻԿ.—Աթէնքից հեռագրում են, որ Թագաւորի նախագահութեամբ կայացած կարևոր խորհրդակցութեան մէջ ընդունվեց Յունաստանի միջամտութեան մասին արված առաջարկութիւնը։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 փետրվ.

ՊԱՐԻԶ.—Գեներալ Լակրուան մեկնեց բրիտանական գլխաւոր բանակը՝ յանձնելու համար Ֆրենչին շքադրամներ պատերազմական գերազանց ծառայութեան համար։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հաղորդում են, որ մարտի 2-ից ալիւրի ամենօրեայ չափը ամեն մի մարդու դարձրած է 200 գրամ։ Փոքրհասակներին տրվում է կէս չափով, մի տարեկանից պակաս երեխաներին հաց բոլորովին չէ տրվում։

ՄԻՆՍԿ.—Պատերազմի 7 ամսվայ ընթացքում Մինսկի և Լունինէցի վրայով տարել են 2329 օֆիցէր և 110,061 զինուոր գերի։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Պարլամենտը լիազօրեց կառավարութեանը անհրաժեշտութեան դէպքում յայտարարել երկրում պաշարողական դրութիւն։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից տեղեկացնում են, որ «Ցէպպէլինը», իջնելիս, կպել է Տիրլէմօնի մօտ մի ծառի, փշավել և զինաթափ է եղել։

ՀՌՕՄ.—Հիմնվեց Իտալիայի և Ռուսաստանի, ինչպէս նաև Իտալիայի և բալկանեան պետութիւնների միջև առևտրական կապեր հաստատող ընկերութիւն, որի նախագահ ընտրված է կոմս Ռօբէրտօ Վիսկոնտին։

ՍՕՖԻԱ.—«Н. Вр.»-ում տպված յօդուածի առիթով, ստամբուլօվեանների բոլգարական կենտրօնական կոմիտէտը հրատարակել է մի դեկլարացիա, որի մէջ ասված է. «Բոլգար ժողովուրդը կամենում է խաղաղ ապրել բոլոր մեծ պետութիւնների, մասնաւորապէս իր ազատարար Ռուսաստանի հետ։ Սակայն չը պէտք է մոռանալ, որ բոլգար ժողովուրդն անկախ է և ունի սեփական շահեր, որոնց կարող է պաշտպանել»։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վիէննայից հաղորդում են, որ ամբողջ Աւստրօ-Ունգարիայում զինուորական ծառայութեան են կանչվում 1873—1877 թ. թ. ծնված չը ծառայած լանդշտուրմիստները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը յատկացրեց 4 միլիօն ռուբլի համառուսական միութեան կոմիտէտին՝ հիւանդ ու վիրաւոր զօրականներին խնամելու գործունէութիւնը աւելի զարգացնելու համար։

ՊԱՐԻԶ.—Օդագնաց Պէգուն պարգևատրվեց զինուորական շքադրամով՝ գերմանացի օդագնացներին աջողութեամբ հալածելուն համար։ Յունվ. 23-ին նա ցած գլորեց գերմանական 2 աէրօպլան։

ՊԱՐԻԶ.—Մամուլի բիւրօն, յենվելով գերմանական գլխաւոր շտաբի պաշտօնական ցուցակների վրա, վկայում է, որ պատերազմի 5 ամիսների ընթացքում գերմանական հետևակ գնդերը կորցրել են աւելի քան 3 միլիօն մարդ՝ չը հաշված հիւանդներին։

ՀՌՕՄ.—Զէնքի են կանչված 1885—1888 թ. թ. զինուորակոչութեան ունտէր-օֆիցէրները։

Աւստրիական սահմանից հեռագրում են, որ աւստրիական կառավարութիւնը վճռել է զէնքի կանչել 38—43 տարեկան տղամարդկանց, որոնք երբէք չեն ծառայել զօրքի մէջ։

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՅԱՆՈՒՄ

Կայսերական Տան մինիստրութեան հրատարակած գրքում, որը նուիրված է Թագաւոր Կայսրի գործող զօրաբանակը այցելելուն, հաղորդվում է հետևեալը.

«Զարմանալի կերպով հասարակ է Գերագոյն Զօրահրամանատարի կայանի կեանքը։ Ողջ ժամանակ այդտեղ նուիրված են գործի, ծանր և լարված աշխատանքի։ Այդտեղ ամենքը աշխատում են առանց դադարի. ճաշի, թէյի և քնի համար շատ քիչ ժամանակ են վատնում։

«Գերագոյն Զօրահրամանատարի շտաբը շատ մեծ չէ, առանձնապէս եթէ ի նկատի ունենանք, որ մեր բանակը հասնում է մի քանի միլիօնի։ Հէնց իրա Գեր. Զօրահրամանատարի շքախումբը կազմված է 10 մարդուց, որից վեցը թիկնապահներ են։ Շտաբին կից գտնվում են գլխաւոր շտաբի 15 օֆիցէր, իսկ բոլոր օֆիցէրների թիւը հասնում է 50-ի. այնուհետև կան երկրաչափներ և մի քանի օֆիցէրներ տնտեսական և վարչական գործերի համար։ Կան ներկայացուցիչներ ծովային շտաբի կողմից, արտաքին մինիստրութիւնից և պաշտօնեաներ քաղաքացիական մասից։ Կայանումն են գտնվում մշտապէս և դաշնակից բանակների՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Եապօնիայի, Բէլգիայի և Սերբիայի զինուորական գործակալները։ Ահա և բոլորը։

«Կայանի աշխատանքը Նորին Մեծութեան ներկայութեամբ էլ գնում է իր սովորական կարգով։ Նորին Մեծութիւնը առաւօտից սկսած Գեր. Զօրահրամանատարի հետ միասին զբաղվում է պատերազմի անցքերի քննութեամբ։ Այդ յամառ աշխատանքները տեւում են ամբողջ ժամեր։

«Նորին Մեծութեան՝ Գեր. Զօրահրամանատարի հետ կատարվող աշխատանքների առանձնայատկութիւնը կազմում է այն, որ Թագաւորը ամեն օր առաւօտից կայանում լինելով, չի խանգարում շտաբի ընդհանուր կարգը։ Մեծ Իշխանը, գեներալներ Եանուշկևիչ և Դանիլով շարունակվում են զբաղվել ընթացիկ աշխատանքով։ Նորին Մեծութիւնը լաւ իմանալով իրերի ընդհանուր դրութիւնը, ընդհանրապէս շատ մանրամասնութիւնների մէջ է մտնում և անհրաժեշտ բացատրութիւններ է ստանում իր հարցին և ռազմական վերջին ընդհարումների մասին։

«Կայսրութեան կառավարութիւնը Թագաւոր Կայսրի մեկնումով կանգ չի առնում։ Ամեն օր մինիստրները Նորին Մեծութեանը ուղարկում են իրանց զեկուցումները։ Այդ ամենը պէտք է կարդալ, մտածել, դատել և տալ Իր Թագաւորական վճիռը։

«Այսպէս էին անցնում Նորին Մեծութեան զբաղմունքները երեք օր շարունակ»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ռազմագէտների կարծիքով, ռուսների դէմ գործում են գերմանական առաջապահ զօրամասերը, որոնց նպատակն է միջոց ու հնարաւորութիւն տալ իրանց ետևում գտնվող գլխաւոր ուժերին փոխել իրանց զօրաճակատը։ Այդ հիման վրա Բզուրայի և Ռավկայի շրջաններում մօտիկ ապագայում խոշոր կռիւներ չը պէտք է սպասել։

◆ Նիւ-Եօրկից տեղեկացնում են, որ Դիւպօնէի վառօդի գործարանը դաշնակիցներից ստացել է 50 միլիօն դոլլարի պատուէր։

◆ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Բոլգարիան պատրաստվում է անակնկալ յարձակվել Յունաստանի վրա, որպէսզի վերջինս անկարող լինի հանդէս գալ։

◆ Հեղինակաւոր ռազմագէտների կարծիքով գերմանացիների փորձը՝ յարձակվելու մեր զօրքերի դիրքերի վրա Պիլիցայի շրջանում, աչքի չէ ընկնում առանձին ակտիվ նշանով։ Կարծիք են յայտնում, որ գերմանացիները, որ գործում են Օսովէցի շրջանում, նեղը կընկնեն մօտ օրերս։ Մեր շարժումը դէպի գերմանական զօրաճակատը շարունակվում է անընդհատ, թէև դանդաղ։ Դանդաղութիւնը բացատրվում է, գլխաւորապէս, կլիմայական պայմաններով։ Առաւել ակտիվ և խոշոր գործողութիւններ կարելի է սպասել ապրիլից ոչ վաղ։

◆ Կիտչեների նոր միլիօնանոց բանակը փոխադրվում է Ֆրանսիա և մայիսի վերջին ցամաքի վրա կը լինի։

◆ Բեռլինում հաւատացած են, որ Յունաստանը շտապով հանդէս է գալու։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ պաստոր Նէգրան Պետրօգրադի Կարմիր Խաչին յայտնել է, որ նրա ծուխը ցանկութիւն է յայտնել լիւթերական ոգով կրթել ու որդեգրել այն հայ երեխաներին, որոնք զրկվել են ծնողներից ներկայ պատերազմում։ Այդ յայտարարութիւնը յանձնված է քաղաքային հայկական կօմիտէտին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 փետրվարի

ԹԱՒՐԻԶ.—Գահաժառանգին ընդառաջ են գնում Միանից մի խումբ պարսիկ կօզակներ՝ ռուս օֆիցէրի հրամանատարութեամբ և մի քանի հարիւր սարբազներ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

21—22 փետրվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Դատաստանական պալատի դեպարտամենտների ընդհանուր ժողովը, դատախազի բողոքի համաձայն, փոխեց երդուեալ-դատաւորների խորհրդի որոշումը, որի համաձայն պատժից ազատվել էին Բէյլիսի գործի առիթով բանաձև ուղարկած փաստաբանները, և որոշեց երեք փաստաբանների՝ Կերէնսկիին, Պերեվէրզեվին և Սօկոլովին արգելել պարապել փաստաբանութեամբ մի տարի, 32 հոգու կէս տարի, և 5 հոգու արդարացրեց։

Պաշտօնական։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարչի պաշտօնավարման առանձնասենեակում փետրվ. 20-ին կայացաւ ուսումնարանական շրջանների հոգաբարձուների խորհրդակցութիւնը մինիստրի օգնական Շեվեակովի, դեպարտամենտների տնօրէններ Վիլէվի և Վէստմանի և արդիւնաբերական դպրոցների բաժնի կառավարիչ Րիկովի մասնակցութեամբ։ Խորհրդակցութիւնից առաջ կոմս Իգնատիեվը ճառ արտասանեց, որի մէջ բացատրեց, որ ներկայ խորհրդակցութեան նպատակն է՝ ունենալ մտքերի փոխանակութիւն սկզբունքային հարցերի վերաբերմամբ՝ ուսումնական վարչութեան գործունէութեան ուղղութեան համար մօտիկ ապագայում։ Կոմսը ասաց, որ թէև ինքը ընդունում է պետականութեան սկզբունքի անյողդողդ լինելը դպրոցում, բայց և կողմնակից է, որ դպրոցը պէտք է ծառայէ և ազգաբնակութեան կարիքներին։ Դպրոցական գործը պէտք է քննել կեանքի պահանջների տեսակէտից։

Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութեան կառավարիչ իշխան Շախովսկին ստանձնեց իր պարտականութիւնները։

Բացվեց Պետրօգրադի շրջանի կօօպէրատիվ կազմակերպութիւնների ներկայացուցիչների համագումարը մօտ 250 հոգու ներկայութեամբ։

ՄՕՍԿՎԱ.—Մաղթանքից յետոյ բացվեց Կայսերական ռուսական թատրօնական ընկերութեան պատգամաւորական համագումարը, որ յարգեց յոտընկայս կռւի դաշտում ընկածների յիշատակը։ Միաձայն որոշվեց խնդրել Ընկերութեան Օգոստափառ Նախագահ Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչին առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել ռուս արտիստների հաւատարիմ զգացմունքները։ Որոշված է նաև ողջոյնի հեռագիր ուղարկել Ընկերութեան Օգոստափառ Նախագահին և հեռագիր Գերագոյն Զօրահրամանատարին՝ արտայայտելով հիացմունք ռուս զօրքի հանդէպ։

ՏՕԿԻՕ.—Գալիք շաբաթ հրատարակվելու է Չինաստանի տեսակէտը հանդէպ Եապօնիայի պահանջների։ Լուրերի համաձայն, եթէ Չինաստանը մերժէ համաձայնել այդ պահանջների հետ, Եապօնիան վճռելու է դիմել վճռական միջոցների Չինաստանի դէմ։

ՕԴԵՍՍԱ.—Նիկոլայէվեան Վարկային Ընկերութեան մէջ երևան հանված զեղծումների գործը։ Էքսպերտների քննութեանն առաջարկվեց 50 հարց։ Էքսպերտները ասում են, որ այդ հարցերի քննութիւնը կը պահանջէ ոչ պակաս քան 9 օր։ Պալատը որոշեց ընդհատել նիստերը մինչև մարտի 4-ը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՑՈՒՑԱԿ

Փինչինեցոյի հայ Նուիրատուների
(Յօգուտ հայ փախստական-գաղթականների)
(Տես «Մշակ» № 17)

Եղբ. Աղաջանեան 31 ռ., Մ. Գէորգեան 25 ռ., Բաղդասար Բաղդասարեան և Յովհ. Սավադեան 15 ռ., Ն. Աւետիսեան, եղբ. Գէորգեանք և Խ. Յարութիւնեան 10-ական ռուբլի, Գ. Պետրոսեան, Մ. Գէորգեան, Ս. Մարգարեան, Ա. Յովակիմեան, Ս. Ստեփանեան, եղբ. Ստեփաննեանք, Յ. Խաչատրեան, Յ. Խաչումեան և Ա. Աստուեան 5-ական ռ., Վ. Բաղալեան, Թ. Օհանեան, Յ. Տէր-Սարգսեան, Յ. Յարութիւնեան, Մ. Միքայէլեան, Ա. Բարսեղեան, եղբ. Պետրոսեան, Դ. Աւդանդալեան, Ա. Աւդանդալեան և Յ. Մուսայէլեան 3-ական ռ., Հ. Համբարձումեան, Հ. Խաչումեան, Մ. և Ա. Ադամեանք, Հ. Մելքումեան, Խ. Օհանեան, Կ. Սանթուրեան, Պ. Կ. Կոզլով և Ռ. Անտոնեան՝ 2-ական ռ., Գ. Յովսէփեան, Գ. Բաբայեան, Յ. Դանիէլեան, Մ. Միքայէլեան, Յ. Բաղալեան, Ն. Մելքումեան, Շ. Յարութիւնեան, Յ. Խամիրզար 1-ական ռ., Բուխանցեվ՝ 50 կ.։ Գումարն է 200 ռ. 50 կ., որից 50 կ. դուրս գալով պօստային փոխադրութեան համար, մնացած 200 ռ. ստացված է խմբագրութեանս մէջ։

ԻՇԽ. Վ. Լ. ԳԵԼՕՎԱՆԻ

Կիրակի առաւօտեան, փետրվարի 22-ին, Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցում վախճանվեց Պետական Դումայի անդամ (Քութայիսի նահանգի կողմից) իշխ. Վ. Լ. Գելօվանին, 37 տարեկան հասակում։

Գելօվանին նշանակված էր Պետական Դումայի կազմակերպած սանիտարական խմբի կողմից լիազօր և ղեկավար և 3 ամսից ի վեր գործում էր Արդահանի շրջանում։ Նա այդտեղ, Զրմաւղ կոչված կէտում, վարակվեց բծաւոր տիֆ հիւանդութիւնից և փետրվարի 14-ին բերվեց Թիֆլիս ու զետեղվեց քաղաքային հիւանդանոցում։ Դժբաղդաբար, իր ամուսինն ևս, որ իր ընկերն էր սանիտարական խմբի գործունէութեան մէջ, նոյնպէս վարակվեց նոյն հիւանդութեամբ և այսօր անյուսալի վիճակի մէջ է։ Երեք օր առաջ Գելօվանին ընկաւ անյուշութեան մէջ և բժիշկների բոլոր ջանքերը, մարդկային բոլոր հնարները անզօր եղան փրկելու նրան և կորզելու մահվան ճիրաններից։

Գելօվանին մեռաւ իր ուժերի և կեանքի ամենաեռանդուն շրջանում, երբ նա դեռ յոյս ունէր երկար գործելու։ Նա զոհ գնաց իր մարդասիրական ձգտումներին և պարտականութեան. նա կամենում էր սփոփել, ամոքել մարդկային ցաւերը, աղէտները, և ինքն զոհվեց։

Զոհ մարդասիրութեան, ընկերսիրութեան, եղբայրսիրութեան։

Այդպիսի մահը՝ մահ չէ, իմացեալ մահ է, ուրեմն անմահութիւն է։

Այդպիսի մահի առաջ երկիւղածութեամբ մը պէտք է խոնարհվել և մաղթել, որ Գելօվանիի ձեռքով սերմանած մարդասիրութեան գաղափարները ուռճանան և ծլեն։

—

«Մշակի» խմբագրութիւնը երէկ ուղարկեց Պետական Դումայի նախագահին հետևեալ հեռագիրը.

«Մշակ» լրագրի խմբագրութիւնը խորին ցաւակցութիւն է յայտնում Պետական Դումային նրա անդամ Գելօվանիի անակնկալ մահվան առիթով, որ զոհ ընկաւ իր պարտականութիւններին և քաղաքացիական առաքինութեան»։

—

«Աղբիւր» և «Տարազ» հանդէսների խմբագիր Տ. Նազարեանը Պետ. Դումայի նախագահ Ռօձեանկօյի անունով ուղարկել է հետևեալ հեռագիրը.

«Աղբիւր» և «Տարազ» հանդէսները վշտակցելով իրանց ցաւակցութիւնն են յայտնում Պետ. Դումայի ականաւոր պատգամաւոր իշխ. Վ. Լ. Գելօվանիի մահվան առիթով և գլուխ են խոնարհում նրա անձնուրաց գործունէութեան առաջ»։

ԲԱՐՕՆ ՖՕՆ-ԿՈՒՉԵՆԲԱԽԻ ԵՒ ՆՐԱ ԿՆՈՋ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մենք արդէն հաղորդել էինք Թիֆլիսի լաւ յայտնի կալուածատէր բարօն ֆօն-Կուչենբախի և նրա կնոջ սպանութեան մասին։ Այժմ պարզվում է, թէ ինչ հանգամանքներում են սպանվել Կուչենբախ ամուսինները։

Բարօն Կուչենբախը իր կնոջ հետ լինում է Տաբարուի իր կալուածքում, որը նա գնել է Գուրգէնբէգեանից, երբ պատահում է այդ դէպքը։ Ինչպէս ասում են, այդ կալուածքում տեղի են ունեցել շատ սպանութիւններ, ի միջի այլոց այդտեղ տարիներ առաջ սպանվեց և կալուածքի նախկին տէր Գուրգէնբէգեանը։ Այդ պատճառով բարօնին միշտ նախազգուշացնում էին, որ տեղը վտանգաւոր է, թող իր վրա զէնք կրի։ Այդպէս էլ նա միշտ զէնք էր կրում։

Այդ օրը, այսինքն փետրվարի 17-ին, նա իր երեք ծառայի հետ սառցարանի վրա աշխատելու ժամանակ, հեռուից նրան մօտենում են 10 հոգի։ Գուցէ և հովիւներ չեն լինում, բայց ամենքն էլ հագնված են լինում հովիւների պէս։ Բարօնը ոչինչ չը կասկածելով շարունակում է իր աշխատանքը, սակայն հովիւները մի քանի համազարկով գետին են տապալում նրան։

Ահաբեկված բանուորները և դաշտում եղած գիւղացիները թաքնվում են տան մէջ։ Յարձակվողները պահակ են կարգում տան վրա։

Իրարանցումից օգտվելով, ռուս բանուորը թաքնվում է մօտակայ անտառում։ Սակայն նրան նկատում են և նրա ետևից մի քանի մարդ է գնում։ Մահով սպառնալով նրան կանգնեցնում են, մի քանի հարուած տալիս և փակում այն տան մէջ, ուր միւսներն էին։

Նախքան սպանութիւնը բարօնեսսան լինում է այգում, բայց երբ նա լսում է հրացանաձգութիւնների ձայնը, շփոթվում է և չէ իմանում ուր գնալ։ Աւազակները բարօնեսսային մօտենում են հովիւների մի քանիսը և ձեռքերից բռնելով տանում են սենեակ, ուր և սպանում են նրան։ Սպանութիւնից առաջ բարօնեսսայից փող են պահանջում, վերցնում են բանալիները, անկիւնի զելի պահարանը քրքրում և սպասած գումարը չը գտնելով, բարօնեսսային սպանում են ճակատից։ Հրացանի կոթով այնպէս խփում խեղճ կնոջը, որ ուղեղը թափվում է։ Բացի այդ մի քանի ուժեղ հարուածներ են նկատվում նրա կրծքի և սաեղի վրա։

Այդ ամենը կատարելուց յետոյ նրանք կողոպտում են տան եղած-չեղածը և փշրում բոլոր ապակեղէնը և յետոյ քէֆ անում տանտիրոջ հացով ու գինով։

Հեռանալու ժամանակ նրանք պատուիրում են փակված բանւորներին և գիւղացիներին դուրս չը գալ մինչև իրանք կը հեռանան։ Եւ խեղճ, անզէն մարդիկ այդպէս էլ անում են։

Աւազակները գտնված չեն տակաւին։ Հետախուզութիւնը շարունակվում է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մի [illegible] դէպք

Զաքաթալա, 10 փետրվարի

Մի քանի օր առաջ շրջանիս Ալիաբաթ գաւառում գաղտնաբար սպանվեց «Բերդանի» հրացանի գնդակով Թիոնէթի գաւառի Օմալի գիւղի բնակիչ հովիւ Պետր Բագատարիձէն։

Քննութիւնը երևան հանեց, որ այդ ոճրի հեղինակը Ալիաբաթի գաւառի Սուագիլ գիւղի մի թուրք է, որը և կալանաւորվեց։

Ոճրագործը խոստովանեց, որ արդարև ինքն է սպանել վրացուն, միայն այն ժամանակ, երբ վերջինս, իբր թէ, զօրով բռնաբարում էր իրան թուրքին դաշտում...

Մի բան, որ անհաւանական է և միանգամայն կասկածելի։

«Մեծն Վարդանի» ներկայացումից յօգուտ ծխ. դպրոցի մնաց զուտ արդիւնք 100 ր.։ Խաղը շատ թոյլ անցաւ։

Մեզ մօտ անասելի ցրտեր են անում. հացի պակասութիւն է զգացվում։

Սօյգադէ

Մթերքների թանկութիւն

Խանքենդ, 12 փետր.

Վերջին օրերս մեզանում հրաշալի եղանակներ են լինում, կարծես գարուն լինի։

Մի քանի մթերքներ—ինչպէս օրինակ՝ շաքարը, աղը և թէյը—թանգացել են. շաքարի փութը ծախվում է 25—27 կ.։ Հացթուխները Ռուսաստանի ալիւր չեն գտնում, որ հաց թխեն. տեղական ալիւրներն էլ հաց չեն դառնում. եղած հացը սև է և խմոր։ Թէ մինչև երբ պէտք է այդպէս մնայ, այդ չը գիտենք։

Ա. Ա.

Նոր տանուտէրը հաստատված

Շնող, 12 փետրվարի

Երկար սպասելուց յետոյ՝ վերջապէս նորընտիր տանուտէր Յով. Փարսադանեանը պաշտօնի կոչվեց։

Շատ քիչ անգամ է պատահում, որ ընտրված տանուտէրերը իրանց պաշտօնակատարութեան երեք տարին ամբողջապէս ծառայեն հասարակութեանը։ Հասարակութիւնը նրանց մեծ մասամբ անգործունէութեան համար է զրկում պաշտօնից։

Ուստի ցանկալի է, որ նորընտիր տանուտէրը, աչքի առաջ ունենալով նախկին փորձերը, աչալուրջ կերպով ծառայէ և պաշտպանէ հասարակութեան շահերը և, որ գլխաւորն է, վերջ տայ կաշառակերութեան նման խայտառակ սովորութեանը։

Մ.

Կեանքը հայ գաղութում

Քիշինև, 10 փետրվարի

Քաղ. ինքնավարութեան կից կազմված՝ փախստականներին օգնող ռուսաց կոմիտէն, յունվ. 29-ին, տեղիս ժողովարանում կազմակերպեց երաժշտ. երեկոյթ յօգուտ հայ փախստականների։ Ծրագիրը մշակել էր տեղիս կայս. երաժշտ. դպրոցի խմբահուրդը, որը կատարեցին շատ աջող՝ նոյն դպրոցի լաւագոյն ոյժերը։ Հասարակութիւնը մնաց գոհ։ Մաքուր մուտք մնաց 650 ր., որը յանձնվելու է հայկ. կոմիտէին.

Հայկ. կոմիտէն էլ որոշել է տալ մեծ երեկոյթ, «Հայկական օր» կազմակերպել և այլն. ցանկալի է, որ գեղեցիկ որոշումներից գործի անցնեն։

Թեմիս առաջնորդ Ներսէս արքեպիս. փոխադրել է Էջմիածնի կոմիտէին 7000 ր. գաղթականներին նպաստելու։ Հանգանակութիւնը շարունակվում է։

Այս տարի լրանում է գաղութիս հովիւ Բարսեղ ա.-ք. Ղազանչեանի քահանայագործութեան 50-ամեակը. ծխականների մէջ միտք է յղացել արժանաւոր կերպով կատարելու նրա յոբելեանը։

Գ. Փարաջանեան

Խաբրիկներ Մօզդօկից

Մօզդօկ, 12 փետրվարի

Տեղիս հայկ. կոմիտէտը կազմեց կանանց 21 հոգուց բաղկացած մի ենթայանձնաժողով, օժանդակելու կոմիտէտի գործունէութեանը։

Կանանց յանձնաժողովը առաջին հերթին ձեռնարկեց փախստականների համար հագուստներ հայթայթելու։ Յունվ. 9—10-ը «Հագուստեղէնի օր» էր Մօզդօկում. յանձնաժողովի անդամները այդ օրը հաւաքեցին մօտ 60 պուդ հագուստեղէն, որը ախտահանելուց յետոյ ուղարկվեց Էջմիածին՝ Վեհափառի դիւանի անունով՝ գործադրելու ըստ պահանջի։ Նոյն օրը 40 ր. չափ էլ դրամական նուէրներ եղան՝ հագուստեղէնի փոխարէն։

5—6000 ր. բիւջէ ունեցող մեր ծխ. դպրոցը ապահոված է կիսով չափ, իսկ բիւջէի կէսը պատահական և անհաստատ եկամուտների վրա է յուսադրված։ 130-ի չափ երկսեռ աշակերտութիւնը ոչ միայն սովորում է բոլորովին ձրի, այլ և խոշոր մեծամասնութիւնը ստանում է ձրիաբար դպրոցական պիտոյքներ, որովհետև բոլորն էլ ժողովրդի չքաւոր դասի զաւակներն են։ Երբեմնակի նուէրներով հոգացվում է նաև նրանց հագուստեղէնը։

Դպրոցը իր բաց բիւջէն լրացնում է մասնաւոր անհատների նուէրներով, «Աւետիս» ման գալով, ներկայացումներից և այլն։

Անցեալները Յովհ. Նազարեանը իր վաղամեռ դստեր յիշատակին նուիրեց դպրոցին 1000 ր., որպիսի գումարը պիտի ծառայէ իբրև ֆոնդ ս. Ստեփաննոս եկեղեցու գաւթում Մեծ փողոցի վրա դպրոցի համար խանութներ շինելու։ Այս խնդրի առիթով հրաւիրվեց ծխ. ժողով, որ նոյն եկեղ. գումարներից ևս յատկացվի այդ գործին, որ դպրոցը մօտ ապագայում այդ կրպակների եկամուտով ճախացնէ իր բիւջէն, սակայն ծխականներից ոչ մէկը չեկաւ ժողովի. ժողովը յետաձգվեց անորոշ ժամանակով։

Բ. Գեանջումեանի ազգականները հանգուցեալի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 115 ր. նուիրեցին դպրոցին։

Հայ Դրամատիկ. Ընկ. տեղիս Նորակազմ ճիւղը իր անդրանիկ ներկայացումը տուեց յօգուտ դպրոցի։ Զուտ արդիւնքը մօտ 90 ր. եղաւ։ Խաղը շատ աջող անցաւ, դահլիճը լի հասարակութիւնը գոհ հեռացաւ։

Վարդանանց տօնի առիթով դպրոցիս ուս. խումբը տուեց մի դպր. հանդէս՝ գրական-երաժշտ.-թատրոնական բաժիններով. երեխաները խաղացին «Ծուլութեան պատճառը» պիեսը։ Դահլիճում լիք-լեցուն հասարակութիւնը հեռացաւ գոհ և լաւ տպաւորութեան տակ։ Ուս. Կ. Էյվազեանը խօսեց հանդիսում ըստ առուր պատշաճի։

Ռ. Իսկէնդէրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ներկայ փետրվարի 26-ին լրանում է կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվի Կովկասի փոխարքայութեան 10-ամեակը։ Այդ պատճառով քաղաքային վարչութիւնը դումա է մտցնում մի առաջարկ՝ կոմս փոխարքային շնորհաւորանք յայտնելու համար։ Կովկասի միւս քաղաքները նոյնպէս այդ օրը շնորհաւորանք են յայտնելու նորին պայծառափայլութեանը։ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը դումայի կողմից ներկայացնելու է փոխարքային Թիֆլիսի պատուաւոր քաղաքացու դիպլօմ գեղարուեստական զարդերով։

◆ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհու պահեստում աշխատող կանայք մարտի 3-ին Թիֆլիսում կազմակերպում են «Սապօնի օր» յօգուտ կովկասեան ռազմաբեմի զինւորների։ Այդ օրը հանգանակութիւնը լինելու է ինչպէս իրերով, նոյնպէս և դրամով։ Ամբողջ հանգանակութիւնը անմիջապէս ուղարկվելու է առաջապահ դիրքերը։ Հաւաքոյթի գործը կազմակերպվելու է այնպէս, ինչպէս «Սպիտակեղէնի», «Ծխախոտի» օրերը։ Իւրաքանչիւր թաղամասի վրա հսկելու համար ընտրված է մի կին։ Իրեր և դրամ հաւաքողներն իրանց հետ ունենալու են տուփեր. փողոցներում շրջելու են սայլեր և այլն։

◆ Համառուսական քաղաքների միութիւնը Սարըղամըշում բացում է լազարէթ 400 մահճակալով։ Լազարէթի գլխաւոր բժիշկ է նշանակված բժ. Ալ. Աթաբէկեանը։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղաքային կենտրոնական կոմիտէտը Թիֆլիսի պետական բանկի գրասենեակից ստացել է 113 ր. 20 կոպէկ նուէր։

◆ Թիֆլիսի հայկական կենտրոնական կոմիտէտը դիմել է Մոսկվայի հայկական կոմիտէտին, որ սա փախստականների համար բժիշկներ և բժշկութեան-ուսանողներ հրաւիրէ։ Մոսկվայի կոմիտէտի նախագահ Մամիկոնեան հեռագրով պատասխանել է, որ բժիշկներ չը կան։

◆ Քաղաքային վարչութիւնը առաջարկել է սպանդանոցի կառավարչին մի նախագիծ մշակել՝ միսը սպանդանոցից կանոնաւորապէս քաղաք փոխադրելու մասին։

◆ Քաղաքային բժշկա-սանիտարական բիւրօն երևան է հանել դարձեալ բծաւոր տիֆով հիւանդանալու երկու դէպք։

◆ Տիֆով հիւանդացածներին տեղափոխելու համար սանիտարական գործադիր յանձնաժողովը որոշել է վարձել մի կառք և նրան ներկել մի այնպիսի գոյնով, որ տարբերվի միւս կառքերից։

◆ Ներկայումս Թիֆլիսում է գտնվում Պետական Խորհրդի անդամ Եա. Ե. Էրլէլի։

◆ Բծաւոր տիֆից վախճանվեց նաև բժշ. Եւգենի Կօբուլօվ։ Սա վարակվել էր Օլթիում և սրանից 4 օր առաջ բերվեց Թիֆլիս բժշկութեան, ուր և վախճանվեց։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող ուսուցչական կոմիտէտը որոշել է հագուստեղէն և 100 ր. փոխադրել Ախալքալաք՝ գաղթական երեխաներին օգնութիւն հասցնելու համար։

◆ «Մշակի» կիրակի օրվայ № 5-ի «Լրագրում յիշատակուածներից» Սալ-Մանի [illegible]

ԿՈՎԿԱՍ

◆ Սուխումի ծխախոտի տնկարանները պահելու համար երկրագործութեան դեպարտամենտից խնդրվում է 9320 րուբլի։

◆ Համառուսական քաղաքների միութիւնը Բաթումում պահում է 14 լազարէթ՝ հիւանդ և վիրաւոր զօրականների համար։

◆ Մեզ հաղորդում են, որ Զաքաթալայի վաճառական Յովհաննէս Գէորգեանցը իր որդի Նիկօլայի հետ, ամսիս 20-ին, Սղնախ գնալիս, Զաքաթալայից ոչ այնքան հեռու, ենթարկվում են աւազակների յարձակման, որոնք նրանց կողոպտելուց յետոյ՝ հօրը սպանում են, իսկ որդուն վիրաւորում թևից։ Սպանութեան առիթ է տալիս հետևեալ բնորոշ հանգամանքը. երբ աւազակները տեղեկանում են, որ հայրը որդուն տանում է զինւորականութեան, լեզգի աւազակները զայրանում են դրանից և բարկանալով ասում՝ «Ա՛, ուրեմն դու տանում ես որդուդ, որ սովորի և յետոյ ուրիշների հետ գայ մեզ կոտորելու»։ Այս ասելով, հրացանները ուղղում են նրանց վրա և մի գնդակով սպանելով հօրը՝ միւսով վիրաւորում են թևից որդուն, որից վերջինս վայր է ընկնում և ձևացնում մեռած և այդպիսով ազատվում մահից։ Աւազակների զայրոյթը այն աստիճանի է լինում, որ չը նայած այն բանին, որ զոհը գետնին փռված է լինում, նորից մի քանի գնդակ են արձակում անշնչացած հօր դիակի վրա։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԳՐ.-ԳԵՂԱԳԻՏ. ՍԱԼՕՆՈՒՄ

I

Ամսիս 20-ին, Գրական - Գեղագիտական Սալօնում Բ. Իշխանեանը կարդաց մի ընդարձակ դասախօսութիւն՝ «Համաշխարհային պատերազմը և ազգային հարցը, մասնաւորապէս հայկական հարցը» թեմայով։

Բերում ենք այստեղ այդ դասախօսութեան համառօտութիւնը։

Յիշելով ներկայ համաշխարհային ողբերգութեան զարհուրելի արհաւիրքները, դասախօսն անցաւ մեր դարաշրջանի կապիտալիստական կուլտուրայի առանձնայատկութիւններին։ 20-րդ դարը իր դրական կուլտուրայի աննման հօյակապութեան կողքին արտադրեց նաև՝ իբրև կարծես անհրաժեշտ չարիք՝ իր աննման բացասականը։ Կապիտալիստական տեխնիկան մարդկութեանը մատակարարեց կուլտուրական բարիքները հեշտ ու լիառատ վայելելու բոլոր դիւրութիւնները, կիրառելով ժամանակի և ոյժերի էկօնօմիայի գերագոյն սկզբունքը։ Բայց այդ նոյն կապիտալիստական տեխնիկան համարեա հաւասար առաջադիմութեամբ արտադրեց այնպիսի տխուր գործօններ, որոնք իրանց էութեամբ կազմեցին դրական կուլտուրայի ուղիղ ժխտականը։ Խօսքը վերաբերում է պատերազմական տեխնիկային։

Նորագոյն կապիտալիզմը տուաւ մեզ չընաշխարհիկ կուլտուրայի բոլոր հօյակապ կոթողները։ Բայց նոյն այդ կապիտալիզմը հրապարակ հանեց նաև մասսայապան և կուլտուրաջինջ գործիքներ ու մեքենաներ, որոնք ժամերի և օրերի ընթացքում աւերում, կործանում, հիմնայատակ են անում դրական կուլտուրայի տարիների և դարերի արդիւնքները։ Այսօր, ներկայ սերնդի աչքի առաջ, Կրուպի և նման ֆիրմաների ծանր թնդանօթները— պատերազմական տեխնիկայի վերջին հրէշային արդիւնքները—անխնայ փշրում, խորտակում են արուեստի և արդիւնաբերութեան այն բոլոր փառահեղ, սքանչելի բարիքները, որ յղացել և ստեղծագործել են եւրօպական հասարակութեան հանճարեղ միտքը և աշխատող բազուկները դարերի յամառ էներգիայով։

Իսկ ինչ է ասում մեզ այդ երևոյթը։

Այդ երևոյթը վկայում է կապիտալիստական կուլտուրայի զարգացման դիալեկտիկական բնոյթը։ Այդ երևոյթը ցոյց է տալիս, որ կապիտալիստական կուլտուրան ընթանում է ինքնահաստատման և ինքնաժխտման ծայրայեղ հակասութիւնների բովով։ Նա՝ այդ կուլտուրան, գրեթէ հաւասար եռանդով և զուգահեռական համընթացութեամբ արտադրում է դրական ու բացասական ֆակտօրներ, բարիքներ մատակարարող և չարիքներ պատճառող երևոյթներ։

Կապիտալիստական կուլտուրայի արտադրած բացասական խոշոր երևոյթների շարքին է պատկանում նաև ռազմամոլ իմպերիալիզմը, որի նուաճումները անխուսափելի են դարձնում պատերազմների գալուստը։

Դասախօսը տուաւ մի երկար տեսութիւն պատերազմի մասին, որպէս պատմա-հասարակական երևոյթի. նրա ծագման հիմքերի, կատարվող ակտերի և հետևանքների դասաւորութեան մասին, որոնց վերաբերեալ դժբաղդաբար անկարելի է մանրամասն հաղորդել լրագրի սուղ էջերում։

Պատերազմի, որպէս երևոյթի, հասարակական արժէքի բնոյթը կարելի է ձևակերպել այսպէս. նա բացասական և յետադէմ է իր ծագման հիմքերով, իր բովանդակութեամբ [illegible] կան դասաւորումներ։ (Այստեղ յիշվում են պատմական շատ օրինակներ պատերազմական փաստերի, որոնք հաստատում են դասախօսի պնդումը)։

Արդի համաշխարհային պատերազմը, որ մի նոր էպօխայի սկիզբը պիտի դնէ եւրօպական մարդկութեան պատմութեան մէջ, պիտի հրապարակ հանէ անհրաժեշտօրէն իր հետևանքներով մի շարք համաշխարհային պրօբլէմներ դրական բնաւորութեամբ և առաջնակարգ նշանակութեամբ։ Ահա այդ համաշխարհային պրօբլէմների շարքին է պատկանում նաև ազգային պրօբլէմը ժամանակակից Եւրօպայում։

Ի՞նչ ապագայ է խոստանում մեծ պատերազմը՝ կռուող պետութիւնների մէջ ապրող մանր ժողովուրդներին։

Ունկնդիր

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեանքը մոլորակների վրա

Այս օրերս Պետրօգրադում կայացաւ Ռուսական Աշխարհագրական Ընկերութեան տարեկան ժողովը, որտեղ Եա. Ի. Պերելման կարդացել է մի հետաքրքրական զեկուցում «Կեանքը մոլորակների վրա» թեմայով։

Զեկուցանողը, լրագիրների ասելով, սկզբում մատնանշեց այն բանի վրա, որ Մարսի (Հրատ) բնակութեան կարծիքը, որ բաւական տարածված է հասարակութեան մէջ, համարվում է վաղուց հնացած երևակայութիւն այդ մոլորակի մասին, որից յետոյ նա անցաւ իր զեկուցման գլխաւոր հարցին, թէ հնարաւո՞ր է արդեօք կեանքը մոլորակների վրա։ Ժամանակակից հայեացքներով՝ Մարսը դաժան սառնամանիքների աշխարհ է խիստ նօսր մթնոլորտով։ Նրա հողերը բոլորովին անապատներ են, ովկիանոսները միջից սառած աւազաններ են։ Մի աշխարհ, ուր սառոյցը օրէնք է, իսկ ջուրը պակասութիւն, այդ աշխարհը չի կարող լինել [illegible] կառուցուածքների, տների, նաև օրգանական կեանքի աշխարհ։ Մարսի «ջրանցքները» ցնորքներ են, որ ստեղծել են Երկրի խելօք մարդիկ, և ոչ թէ Մարսի բնակիչները։ Վեներան (Արուսեակ) երկնային երկուորեակն է Երկրի, աշխարհտրօպիքական ջերմութեան՝ խոնաւ տաք եղանակով, որ յիշեցնում է Երկրի նախկին շրջանը։ Կեանքի ինքնածագումը Երկրի վրա տեղի է ունեցել այն պայմանների մէջ, որոնք՝ շատ նման են եղել նրանց, որոնք այժմ տիրում են Վեներայի վրա։ Այդ պատճառով՝ շատ հաւանական է, որ Վեներան ծնվող կեանքի աշխարհ է, մի աշխարհ, որ յիշեցնում է մեր սեփական մոլորակը, երբ նրա վրա կեանք էր ստեղծվում։ Այդպէս և Մերկուրին (Փայլածու), որ զրկված է մթնոլորտից, չի կարելի ենթադրել, որ բնական կեանք ունենայ։ Նոյնը պէտք է ասել և մեր Լուսնի մասին։

Մոլորակների ուղեկիցներից միայն Գանիմէտ, Իւպիտէրի (Լուսնթագ) ուղեկիցը, այնքան խոշոր է, որ կարող է իր շուրջը մթնոլորտ պահել։ Բայց եթէ անգամ թոյլ տանք, որ Իւպիտէրի ջերմ գունդը նրա վրա տաքութիւն է թափում, բայց և այնպէս, ինչպէս ցոյց են տալիս հաշիւները, այդ ջերմութիւնը անբաւարար է, որպէսզի Գանիմէտի վրա կեանքի բարենպաստ պայմաններ լինէին։

Իւպիտէրը և Սատուրնը (Երևակ) կիսահանգած արևներ են, հսկայական գազի տաք բոլորագնդեր։ Ենթադրել, թէ այնտեղ գոյութիւն կայ, նշանակում է կեանք որոնել հրաբխային ջեռուցած լաւայի մէջ։ Բայց Ուրանի և Նեպտունի վրա կեանք լինելու հարցը այն օրից, երբ 1908 թւին Լովել և Տիմիրեազեվ գտան խլորոֆիլի բնորոշ հետքեր, միանգամայն անսպասելի ընթացք ստացաւ։ Պէտք է ենթադրել, որ ծայրայեղ մոլորակների սեփական, ներքին տաքութիւնը և հեռաւոր արևի ժլատ լոյսը (400—900 անգամ աւելի թոյլ, քան մեզ մօտ) բաւական են լինում նրանց վրա բուսական կեանք պահելու համար։ Կեանքի սաղմերը կարող էին այդ մոլորակների վրա անցնել դրսից, շատ հնարաւոր է, որ հէնց մեր երկրից։

Այդպիսով մեր երկիրը հանդիսանում է կեանք ցանող աշխարհային տարածութեան մէջ, որը իր գոյութեան ընթացքում գուցէ բեղմնաւորել է շատ աշխարհներ, առաջ բերելով նրանց վրա կենդանի բնութիւն, աշխարհներ, որոնք մեր աշխարհի հետ արիւնակից ցեղակիցներ են։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ, Петроградъ, 1915 г.

(Ժողովածու Դիպլոմատիկական Դօկումէնտների։ Ռէֆորմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ց 10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

VI

21-րդ դօկումէնտը՝ Բիթլիսի ռուսաց հիւպատոս Շիրկօվի հեռագիրն է դեսպան Գիրսին, 1913 թ. մայիսի 1-ին, թէ քիւրդերը անպատիժ սպանում և թալանում են հայերին, թէ հայերի դրութիւնը անտանելի է։

22-րդը՝ դեսպան Գիրսի զրուցիւնն է մինիստր Սազօնովին մայիսի 6-ին, ո- [illegible] կան նահանգների դրութեան մասին և ապրիլի 29-ին ներկայացրել է առանձին պատգամաւորութեան միջոցով մեծ վեզիրին։ Պատգամաւորութիւնը բաղկացած է եղել պատրիարքից, երկու եպիսկոպոսներից և Խառն Ժողովի նախագահից ու փոխ-նախագահից։ Ապա կցում է.

«Պատրիարքարանի յիշատակագիրը հրաւիրում է օսմանեան կառավարութեան ուշադրութիւնը վերահաս աղէտի յուզալից նշանների վրա, աղէտի, որ աւելի սոսկալի է լինելու, քան բոլոր նախընթացները։ Մուսուլման մասսայի մէջ տարածվում է համոզմունք, թէ քրիստոնեաներն են յանցաւոր բոլոր այն աղէտների, որ թափվում է վերջերս կայսրութեան վրա։ Սպանութիւններ, աւազակութիւններ, բռնի իսլամացումն և ամեն տեսակ բռնութիւններ հայերի վրա շարունակվում են և յանցաւորները ոչ միայն չեն պատժվում, այլ երբեմն նոյն իսկ վարձատրվում են։ Իբրև ապացոյց պատրիարքարանը առաջ է բերում մի շարք փաստեր. մի քանի մութ անձնաւորութիւններ, յայտնի իբրև Ադանայի կոտորածի կազմակերպողներ, նորից երևացել են այդ վիլայէթում. Ադանայի լրագիրները գրգռում են ժողովուրդը քրիստոնեաների դէմ. զանազան կասկածելի անձինք, դատապարտված Ադանայի գործի համար, յաճախ այցելում են վալիին։ Վանում բանտերում հեծեծում են մօտ 150 հայեր մեղադրվելով մի մուսուլմանի սպանութեան մէջ, մինչ հայ քահանային և ուսուցչին սպանող մուսուլմանները արդարացված են և ազատ թողնված։ Իշխանութիւնները խիստ կերպով խլում են հայերից զէնքը, մինչ նրանց թշնամիները յայտնապէս զինւորվում են։ Շատ հայեր, վախենալով ջարդերից, թողնում են իրանց հողերը և գնում են քաղաքները։ Ի լրումն ամենայնի, կառավարութիւնը հետզհետէ բնակեցնում է հայաբնակ շրջաններում թիւրք մուհաջիրներին։

«Յիշատակագիրը առանձին թափով յարձակվում է թիւրք դատաւորների և պաշտօնեաների վրա, որպէս «հին ռեժիմի գաղափարներով և սովորութիւններով տոգորված մարդկանց, ուրեմն և անընդունակ ըմբռնելու ժամանակի պահանջները և կայսրութեան ճշմարիտ շահերը»։ Այդ պաշտօնեաները քրիստոնեաներին համարում են իսկական յանցաւոր թիւրքական պարտութիւնների և քրիստոնեաներին ոչնչացնելու մէջ տեսնում են ժողովրդական աղէտներին վերջ տալու միջոց։ Յիշատակագիրը մեծ վեզիրից պահանջում է հրահանգների հրատարակութիւն, որոնք հաստատէին պաշտօնական մարդկանց անձնական պատասխանատուութիւնը բոլոր ապօրինի գործողութիւնների համար, որ կը կատարվեն նրանց անփութութեան պատճառով, նաև հրատարակութիւն կառավարչական հաղորդագրութեան, որ հերքէր թիւրք մասսաների մէջ հայերի վերաբերմամբ ստեղծված յեղաշրջված կարծիքները։

«Խիստ բնորոշ է, որ յիշատակագիրը սահմանափակվում է հայերի ծանր դրութիւնը արձանագրելով և ոչ մի խօսքով չի յիշում ռեֆորմների մասին։ Գաղտնի տեղեկութիւնների համաձայն, այդ հանգամանքը անհանգստացրել է մեծ վեզիրին, որը այդ բացատրել է այն մտքով, թէ հայերը լուրջ վերանորոգումներ են սպասում Եւրօպայից և այդ մասին Բ. Դրան հետ ամեն տեսակ բանակցութիւններ վարելը աւելորդ են համարում։ Մահմուդ Շեֆքէթ-փաշան, պատգամաւորներին լսելով, ինքն է խօսք բացել ռեֆորմների մասին, բայց պատգամաւորութիւնը յայտնել է, որ ինքը լիազորված չէ այդ նիւթի մասին խօսելու։

«Ինչ վերաբերում է հայերի գանգատին, մեծ վեզիրը դրանք գտել է նշանաւոր չափով հիմնաւորված։ Հայ պատգամաւորութեանը ընդունելու մասին եղած պաշտօնական հաշւետւութիւնից երևում է, որ Մահմուդ Շէֆքէթ-փաշան չի հերքում յայտնի խռովութեան գոյութիւնը հայկական գաւառներում և յայտնել է կառավարութեան հաստատ որոշման մասին՝ ներկայ դրութեանը վերջ դնելու։ Սակայն հէնց այդտեղ էլ նա մատնացոյց է արել Բ. Դրան գործը չը բարդացնելու անհրաժեշտութեան վրա և յոյս է յայտնել, որ հայերը ընդառաջ կերթան կառավարութեան ջանքերին։ Այնուհետև մեծ վեզիրը խոստացել է պաշտօնանկ անել անարժան պաշտօնեաներին և Հայաստան ուղարկել առաւել ընդունակ և գործունեայ վարչապետներ։ Հերքելով հայերի մասին տարածված զրպարտութիւնները, մեծ վեզիրը խիստ ջերմ արտայայտութիւններով գովեց նրանց հերոսութիւնը և անձնազոհութիւնը, որ ցոյց տուեցին պատերազմի ժամանակ։

«Պատրիարքարանի վերաբերմունքը դէպի կառավարութեան նոր խոստումները տակաւին չի որոշվել։ Այս օրերս կայացաւ Հայոց Ազգային Ժողովի նոր նստաշրջանի բացումը, որի ժամանակ պատրիարքը արտասանեց մեծ ճառ։ Նորին Երանելիութիւնը իր ճառում կրկնում է սովորական գանգատները հայերի անտանելի դրութեան և կառավարութեան անգործունէութեան մասին, որը, չը նայած հոկտեմբեր ամսից իրան յանձնած 176 թաքրիրներին, չի պատ- [illegible] առաջադրութիւն անիլ կառավարութեան, որի հետեւանքների մասին Ժողովին կը զեկուցվի արտակարգ նիստում։ «Ինչ վերաբերում է Կառավարական ռեֆորմների ծրագրին և հայկական գաւառները յանձնաժողով ուղարկելուն,—նկատեց պատրիարքը,—մենք չը գիտենք, թէ կառավարութեան այդ քայլերը որքան ռէալ և ձեռնտու են մեզ համար. մենք ձգտում ենք, ճիշդ է, ձեռք բերել անձի և գոյքի անձեռնմխելիութիւն, բայց մենք դրանց համար պահանջում ենք ռէալ երաշխիքներ»։

«Ազգային Ժողովի արտակարգ նիստը, ուր պէտք է քննվեն մեծ վէզիրի վերջին յայտարարութիւնները, պէտք է կայանայ մի շաբաթից յետոյ»։

(Կը շարունակվի)

ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐ

Այս վերնագրով լեհ հրապարակախօս Ադոլֆ Նովաչինսկի «Kurjer Poranny» լրագրի մէջ նորերս զետեղած էր յօդուած մը, որուն թարգմանութիւնը առաջ կը բերեմ։

«Եթէ որոնենք աշխարհաքարտէզին վրայ ազգեր, որ մեզ պէս պատժուած ըլլան նախախնամութեան ձեռքով, որոնք՝ հետախուզելու համար ամենէն խորունկ, էական պատճառները այդ ազգերու քայքայման և ծանօթանալու անոնց գործադրած ինքնօգնութեան միջոցներուն, կը հանդիպինք ազգի մը, որ անհամեմատ աւելի համակրելի է՝ քան իռլանդացիք, աւելի մեծ յարգանքի արժանի՝ քան ռումինացիք, աւելի հետաքրքրական՝ քան չեխերը, և այս ամեն ազգերէն ու միաժամանակ մեզմէ աւելի դժբաղդ է։ Այդ ազգին զաւակները բառիս բուն իմաստով ցիր ու ցան եղած են ամբողջ երկրագնդի վրայ՝ իբրև մշտական գաղթականներ՝ և՛ ի Բոմբէյ, և՛ ի Մարսէյլ, ի Կալկաթա, ի Մոսկուա, ի Կահիրէ, ի Սինգափուր և Իլվով, յԱլէքսանդրիա և յԱրխանգէլսկ։ Շատ հին ժամանակէն սկսեալ արդէն անոնց շարք մը սերունդները իրենց հայրենիքը տեսնելու բաղդը չեն ունեցած. այժմեան հայերէն շատերը՝ յանկարծակի հարցումին վրայ՝ գուցէ չկրնային իսկ քարտէզին վրայ Հայաստանը ցուցնել։ Եւ սակայն ունին իրենց ազգային առանձնայատկութեանց ուժեղ զգացումը և կը պահպանեն հաստատուն ու կենսատատ՝ իրենց չափազանց ցայտուն յատկանիշները, որոնցմով առաջին իսկ հայեացքէն կը տարբերուին շրջանի մը մէջ, ուր ապրած են անոնց քանի մը սերունդները։

«Ցաւակցաբար մեզ հետ այդ ազգին զաւակները շփման մէջ մտած և բարեկամացած են դեռ ևս մեր պատմութեան արշալոյսին։ Երբ իրենց պատմական թագաւորութիւնը, որ գրեթէ մեծ պետութեան դիրքն ունեցած էր, բազմադարեայ պերճաշուք գոյութենէ վերջ իր անկումը կը մօտենար, մերը նոր կը ջանար թօթափել իրմէ կիսավայրենի կենցաղին խաւարը, նոր կը կազմակերպուէր վերջին Պեաստի ղեկավարութեամբ։ Մեր Լօկիէտէկին*) ժամանակակից էր անոնց Պօնիատովսկի**)—դժբաղդ Լևոն Զ., Լուսինեան տոհմէ։ Սակայն հայոց թագաւորութեան անկումէն, այսինքն 1374-էն աւելի վաղ հայերը մեր մօտ գտնուեցան ԺԲ. դարու մէջ, Ջերվօն Ռուսիա հրաւիրուեցան Գալիցիայ իշխան Դանիէլի կողմէ։ Հայրենիքին առաջին բաժանումը պատճառ եղաւ հսկայական գաղթի մը. հայ գաղթականները՝ առնելով մի մի բուռ մայրենի հող մետաքսեայ կտորներու մէջ՝ կը ցրուէին Հարաւային Ռուսաստան, Կովկաս, կօզակներու երկիրը և 40,000-անոց մեծ խմբով մը կանցնէին Լեհաստան։ Այդ ժամանակէն սկսեալ հետզհետէ գաղթականներու նորանոր հոսանքներ կուղղուէին Պօնտոսի ափերէն դէպի հիւրընկալ Սարմատիա, և պէտք կը նկատուի կանխաւ դիտելու, որ այստեղ այս «անկոչ հիւրերը» կը հանդիսանան իսկական «աղ երկրիս», իբրև չափազանց օգտաւէտ և ցանկալի տարր մը։ Կը բնակէին գլխաւորաբար քաղաքներու մէջ և շատ տեղեր ուղղակի սաղմնաւորութիւնը կըլլան լեհ քաղաքացի (մեշչան) դասակարգի։ Իլվով քաղաքը՝ լեհութեան այդ ամենէն հայրենասէր օջախը, որ այնչափ պատմական փոթորիկներու հանդիսավայր եղած է, իւրաքանչիւր եղերական դէպքէ դուրս ելած է յաղթական կերպով՝ միշտ փայլելով իր քաղաքակրթութեամբ,—իր լուսաւորութեան համար շնորհապարտ է մեծ մասամբ հայ պանդուխտներուն։ Կամենէց-Պօդօլսկ՝ հին ամրոցներու այդ թագն ու պսակը, իր ամբողջ հռչակը ստացաւ տեղս բնակած հայերէն։ Ի Բուկովինա և Գալիցիա ընդհանրապէս հայկական տարրը ստեղծագործող կը հանդիսանայ և առաջնակարգ դեր կը խաղայ քաղաքական և հասարակական կեանքի մէջ, արդիւնաբերութեան և գրագիտութեան աշխատանքի մէջ։ Ապա ամբողջ Լեհաստանին, ինչպէս և անոր մայրաքաղաք Վարշաւայի մէջ, [illegible] ազգի նշանաւոր [illegible] աշխատակիցներու վրայ։

Արդէն Գրիւնվալդի և Վարնայի կռիւներուն կը մասնակցէին հայերը այս Աբրահամովիչներու, Ալէքսանդրովիչներու, Աւգուստինովիչներու, Աբգարովիչներու, Ակոպսովիչներու, Ապականովիչներու։ Ասոնց մէջէն է, որ յետոյ դուրս ելան հռչակաւոր լեհահայեր՝ Մալախովսկի, Միսասովիչ, Գիբամովիչ, Բերնատովիչ, Եախօվիչ, Մլօձիանովսկի, Գրիգօրովիչ, Բարօնչ, Թէօդօրովիչ։

Խօսելով հայերու ներկայ վիճակին վրայ՝ յօդուածագիրը կը շեշտէ մեր ծրագրին չափաւորութիւնը, նոյնիսկ օպօրտիւնիզմը։ Ապա բաւական կծու բառերով կը դատափետէ «կադէտներու» պարագլուխ Միլիւկովի հակառակ կարծիքը, որ «կը բողոքէ հայերու ծրագրին դէմ յանուն Ռուսաստանի պետական շահերու»։

Ի վերջոյ լեհ հրապարակախօսը խորհուրդ կուտայ իւրայիններուն աւելի զբաղիլ հայերով, որոնցմէ կարելի է բան սորվիլ։ Համեմատելով երկու ազգերը (հայերը և լեհերը) կը վերջացնէ յօդուածը այս բառերով.

«Ապագան կը ցուցնէ՝ թէ այս երկու հաւասարապէս դժբաղդ և թափառական կեանքի դատապարտուած ազգերէն որն աւելի շուտ յաղթող կը հանդիսանայ»։

Վարշավա Մ. Սարգսեան

---

*) Լեհ իշխանական հարստութիւն.

**) Լեհ Թագաւոր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 9 փետրվարի*)

«Մշակի» № 10-ում՝ Վ. Տ.-ն, «Արջի ծառայութիւն» խորագրով յօդուածում, բոլորովին անտեղի յարձակվում է Մոսկվայի հայ ուսանողական բիւրոյի վրա։ Վերջինս միանգամայն համաձայն է յօդուածագրի այն դիտողութեան հետ, թէ նրանք, որոնք կամենում են ռուս հասարակութիւնը ծանօթացնել «Հայաստանի անցեալի և ներկայի հետ», պիտի իրանք լաւ ծանօթ լինեն նրա հետ։

Նա համաձայն է նաև հայ ուսանողութեան վերաբերեալ Վ. Տ.-ի ասած խօսքերի հետ՝ «Врачъ, исцѣлися самъ». Այս ուղղութեամբ ուսանողական բիւրօն միշտ աշխատում է պրօպագանդա մղել, և, բարեբաղդաբար, շնորհիւ հայկական հարցի հրատապութեան, հայ ուսանողութեան մէջ այժմ նկատվում է հետաքրքրութիւն դէպի հայկական կուլտուրան։ Ընդառաջ գնալով այս երևոյթին, բիւրօն կազմակերպում է կիրակնօրեայ հայագիտական դասընթացքներ, նոյն նպատակով նա փոքրիկ ընթերցարան է բաց արել, որտեղ ստացվում են կովկասեան թերթեր։ Սակայն Վ. Տ.-ն սխալվում է, ենթադրելով որ բիւրօն իր ամբողջութեամբ նոյնպէս անծանօթ է «Հայաստանի անցեալին և ներկային», քանի որ նրա կազմի մէջ կան շատ անձինք, որոնք ունեն հայկական միջնակարգ կրթութիւն, այնպէս որ Հայաստանին ծանօթ լինելու մենաշնորհը Վ. Տ.-ին չէ պատկանում միայն։

Իր յօդուածը Վ. Տ.-ն, պիտի ենթադրել, ուղղել է բոլոր նրանց դէմ, որոնք անտարբեր են դէպի հայկականը, որոնք ժամանակաւորապէս, քաղաքական հանգամանքների շնորհիւ, դուրս գալով ասպարէզ և ցանկանալով օգուտ բերել ընդհանուր գործին, ընդհակառակը, վնասում են նրան իրանց անպատրաստութեան պատճառով։ Սակայն բիւրօն զարմանում է, երբ այդ յօդուածի սկզբում դրված ցիտատի շնորհիւ նա ուղղվում է բիւրօյի դէմ։ Վ. Տ.-ն ռուս հասարակութիւնը Հայաստանի անցեալի և ներկայի հետ ծանօթացնելու «բարի նպատակը» համարում է բիւրօյի ոյժերից վեր, հիմնվելով ամբողջապէս այն բանի վրա, որ բիւրօն խնդրել է մամուլի միջոցով «բոլոր ցանկացողներին» ուղարկել իրանց յօդուածները զետեղելու համար ռուսական թերթերում։ Ի հարկէ, եթէ «բոլոր ցանկացողներին» խօսքը բացատրվի այնպիսի լայն չափով, ինչպէս այդ անում է Վ. Տ.-ն, այն ժամանակ բիւրօյի կոչը նման կը լինէր Հալաբարի միկիտանի ցուցանակին՝ «համեցէք», «Распивочная и навыносъ».

Սակայն բիւրօն այդպէս չէր հասկանում իր առաջարկը. նա ի նկատի ունէր հայ յայտնի գրողներին և գրականագէտներին յիշեցնել, որ ներկայ պատմական մոմենտում ռուս հասարակութիւնը մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի հայկական կուլտուրան, մինչդեռ այս կարեւոր հանգամանքի վրա անհրաժեշտ ուշադրութիւն չի դարձվում, ուստի բիւրօն ստիպված եղաւ խնդրել նրանցից տալ յօդուածներ՝ զետեղելու համար ռուս մամուլի օրգաններում։ Հէնց նոյն նպատակով բիւրօն սկսել է առայժմ հրատարակել մի շարք գրուածքներ, որոնք պատկերացնում են Թիւրքահայի Թշուառ կեանքը։

Եթէ Վ. Տ.-ն ի նկատի ունենայ բիւրօյի վերոյիշեալ կազմը, այն ժամանակ նրա համար պարզ կը լինի, որ բիւրօն ինքը քննելով ուղարկված յօդուածները՝ ամեն հասնողի յօդուածը չի զետեղի թերթերում։ Բիւրօն կը շարունակի իր «այժմէական և կարեւոր գործը», և գուցէ Վ. Տ.-ն շուտով ինքը համոզվի, որ բիւրօն էլ ընդունակ է հասկանալու ժամանակի պահանջները և որ նրա արածը «արջի ծառայութիւն» չէ։

Ի վերջոյ, բիւրօն զարմանում է, թէ ինչպէս Վ. Տ.-ն հայ ինտելիգենցիայի ամենաերիտասարդ մասի ներկայացուցչական մարմնին հասցնում է ծանր վիրաւորանք, համարելով նրա արածները կամ անելիքները «արջի ծառայութիւն», թէ ինչպէս նա գործ է ածում ուսանողութեան ներկայացուցչական [illegible]

Ուսանողական բիւրօն աւելի մեծ իրաւամբ «արջի ծառայութիւն» կարող է համարել Վ. Տ.-ի հոգևոր Հայաստանի անըմբռնելի բացէպառով հանդէս գալը. Վ. Տ.-ն պիտի հասկանայ, որ բոլոր այն բացասական երևոյթները, որոնց նա մատնանշում է իր յօդուածում և որոնք նրան ցաւ են պատճառում, այն հանգամանքը, որ հայ ինտելիգենցիայի մեծ մասը անծանօթ է «Հայաստանի անցեալի և ներկայի հետ»—այս բոլորը հետևանք է նրա, որ չը կայ նիւթական Հայաստան և որ ի զուր չէ, որ հայ ազգի 90% տարերային ոյժով ձգտում է ստեղծել նիւթական Հայաստան։

Մոսկվայի հայ ուսան. բիւրօ

---

*) Հետեւելով «Audiatur et altera pars» սկզբին՝ տեղ ենք տալիս այս նամակին։ Խմբ.

ՀԻՒԾՎԱԾՈՒԹԻՒՆ

ու նեարդութիւնը, եթէ առաջացած է Թոքախտից, սիֆիլիսից եւ կամ այլ քրոնիկական հիւանդութիւններից, նէվրաստենիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական Թուլութիւնը, սրտի հիւանդացումները, զառամութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպերմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպերմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել **„ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ"** անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոթէրապիայով հետաքրքրողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья Петроградъ
Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան

№ 4 (П. 2965) 12—2

Պետրօգրադ, 26 յունվարի

Դեկտեմբերի 1-ից մօրաքրոջս շնորհիւ (Ս. Խանթարճեան) ստանում եմ «Մշակ», որը շատ ուշադրութեամբ կարդում եմ և որի մէջ աչքի է ընկնում, թէ ինչպէս բարի մարդիկ ամեն կողմերից օգնութեան են հասնում իրանց ազգայիններին, պատերազմում գտնվող քաջարի հայ կամաւոր խմբերին։ Որպէս տեղիս գիմնազիայի աշակերտուհի և հայ ընտանիքի զաւակ, ես էլ ձգտումն ունեցայ օգնել իմ այն եղբայրներիս, որոնք արիւն են թափում մեր ազգի ազատութեան համար, որով հազիւ թէ կարողացայ պատրաստել իմ սեփական ձեռագործներից մի քանի օրինակներ և այլ հարկաւոր իրեր ուղարկելու իմ հարազատներիս, որոնք գտնվում են պատերազմի դաշտում և կռիւ են մղում մեր դարաւոր ոխերիմ Թշնամի Թիւրքի դէմ, այն յուսատու բաղձի՝ որին միշտ սպասել ենք և սպասում ենք ներկայումս էլ։

Ուղարկածս իրերն են. մէկ զոյգ գըլխանոց, 2 զոյգ գուլպաներ, 4 զոյգ ձնչեբականոց, 3 զոյգ տաքրակներ, 6 կապ ծխախոտ, 6 կապ Թէյ, 6 կապ շաքարեղէն, որոնց Թողնում եմ խմբագրութեանդ հայեցողութեան տակ. Թէ ո՛ր խմբին կուղարկէք, դա ձեր գործն է։

Ընդունեցէք խորին համակրանքներս
Մնամ ձեզ պատրաստակամ՝
Օր. Արաքսիա Գեղամեանց

Յ. Գ.—Ձեզ ուղղած նամակիս մէջ գուցէ և լինեն սխալներ. դա ինձ ներելի է, որովհետև ոչ միայն մեր գիմնազիան, այլ և Պետրօգրադում գտնվող բոլոր ուսումնարանները (ինչտեղ սովորում են հայեր) զուրկ են հայ ուսուցչից, ես կրօնուսուցչից, այնպէս որ ո՛չ կրօն ենք սովորում, ո՛չ էլ հայոց լեզու։ Նոյնը

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Փարիզ, 26 յունվար

Համաշխարհային ճգնաժամի այս օրերուն, Փարիզի հայ գաղութը, իբր կարեւորագոյն գաղութներէն մին, պատերազմի առաջին օրերուն, եթէ շարժումութեան ապացոյց մը չկարողացաւ տալ, սակայն շնորհիւ մտաւորական դասակարգի վերջերս ստացաւ կանոնաւոր ընթացք մը և գնահատելի գործունէութիւն։

1914 Թ. Նոյեմբեր 22-ին կազմուեցաւ մարմին մը, հայ կամաւորներու խումբեր կազմակերպելու պաշտօնով։ Ֆրանսական բանակին տրուեցան 150-ի չափ կամաւորներ։

Ձեռնարկուեցաւ նաև Կովկաս ուղարկուելիք կամաւորներու արձանագրութեան։

Գաղութիս բարեկեցիկ դասակարգը ի բնէ առատաձեռն և հայրենասէր՝ սակայն կարգ մը շողոքորթներու շնորհիւ անտարբեր մնաց ստեղծուած շարժումին։

Ժամանակէ մը ի վեր տիրող այդ սառնութիւնը զանազան դասակարգերու մէջ, ուրախ ենք, վերացուած է այսօր, ինչպէս նաև կարգ մը անհամաձայնութիւններ և թիւրիմացութիւններ, շնորհիւ նոր ընտրուած ազգային ժողովի գնահատելի գործունէութեան։ Յունվար 13-ին, Ա. Վռամշապուհ ք. Քիպարեան, ընդհ. ժողովի հրաւիրելով բոլոր գաղութը, առաջարկեց ընտրել բոլոր գաղութը ներկայացնող ազգային մի մարմին, որուն նպատակը ըլլայ զբաղիլ ազգային ամեն տեսակ հարցերով։

Ընտրութիւնը խիստ յաջող արդիւնք ունեցաւ և կը համապատասխանէ անխտիր բոլոր խաւերու շահերուն։ Ընտրուեցան յայտնի ազգային բարերարներ տեարք Ռուֆայէլ, Մարկոսեան, Ս. Սվաճեան, Քէլէկեան [illegible] և անշահախնդիր գործիչներ պ. պ. Մելիքեան Թախթաճեան և Յ. Ասատուրեան, որոնց մանաւանդ անխոնջ ջանքերուն կը պարտինք այս վերջին յաջողութիւններն այն տեսակէտէն, որ առաջին անգամ ըլլալով Փարիզի գաղութին ներկայացուցիչները կարողացան ի մի հաւաքուիլ, զիրար հասկնալ և մէկ սիրտ գործել։

Գործունէութեան առաջին գնահատելի քայլն եղաւ պաշտօններու յարմար բաշխումը հետեւեալ ստորաբաժանումներով.

1) Քաղաքական շրջանակներում գաղութիս շահերը ներկայացնող մարմին. պ. պ. Հաճեան, Սվաճեան և Զօպանեան։

3) Կովկասի աղէտեալներու օգնող հանգանակիչ մարմին. պ. պ. Մարկոսեան, Զօրայեան և Քէլէկեան-խան։

5) Տեղական նպաստից և բարեգործական յանձնաժողով, որ ընթացիկ գործերու վարողն է, պ. պ. Մելիքեան Թախթաճեան, Ասատուրեան, Անանեան, Գալուստեան, Թագւորեան և փաստաբան Փուլճի։

Առաջին նիստին իսկ հանգանակիչ մարմինը տուաւ իր պերճ ապացոյցը օգնութեան, հանգանակելով իր մէջէն 7000 ֆր., և յոյս ունինք, որ մեծ չափեր պիտի ստանայ հանգանակութեան գումարը, քանի որ գիտակցօրէն վայրկեանին ծանր հանգամանքն ըմբռնած են գաղութիս ներկայացուցիչները։

◆ Բժշկական կամաւորներու խումբ մը մօտ օրէն ճամբայ կելնէ դէպի Կովկաս։

◆ Երիտասարդութիւնը ձեռնարկած է ներկայացում մը, ի նպաստ Կովկասի աղէտեալներուն։

◆ Օժանդակ մարմինը կը շարունակէ պատրաստել զարնան կամաւորներու խումբեր Կովկասի համար։

◆ Այս օրերս սկսուած են մի շարք դասախօսութիւններ. բանախօսեցին գաղութիս երկսեռ բազմութեան առջև պ. պ. Հայկ. Հայպէշեան «Կիլիկիոյ մասին», Բասմաջեան՝ «Հայկական հարցը Մեծն Պետրոսի օրերէն ի վեր» նիւթի մասին, և պ. Մելիքեան Թախթաճեան՝ «Ներկայ պատերազմը, անոր հետեւանքները և հայերուս դէրքը» նիւթի մասին, որ մեծ ընդունելութիւն գտաւ և ծափահարուեցաւ երկար ատեն։

Պր. Թախթաճեան պիտի դասախօսէ նաև «Անգլիան և պատերազմը» նիւթի մասին։

◆ Վերջերս, մեռաւ յայտնի ազգային բարերար Մ. Խերեան. կը յուսացուի որ մեծ գումար մը կտակած ըլլայ ազգին։

◆ Այսօր լսեցինք, որ Վեհ. Հայրապետը հեռագրով մը օգնութիւն խնդրած է տեղւոյս հայ գաղութէն. Հ. Վռմշպ. քահ. Քիպարեան անմիջապէս դիմումներ կատարելով կարողացած է վայրկեանին 12,000 ֆր. գումար մը ուղարկել Կովկասի կարօտեալ գաղթականութեանց։

Ռուբէն Պաղդասարեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր.	երեկ.
	» Բօրժոմ	3 ժ. 20 ր.	ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր.	առաւ.
	Բօրժոմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 Թ.

(Գուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և ուրբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (40 [illegible]) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ . . . 1 ր. 50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԲԻԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . 40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . . 1 ր. 20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . 40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . 15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, . . . 50 կ.
Հ. Առաքելեանի . . . 1 ր.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի . . . 40 կ.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . . 40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի . . . 35 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի . . . 15 կ.
11) ԺՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . . 15 կ.
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի . . . 30 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . . . 25 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . . . 80 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի . . . 50 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. . . . 1 ր.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, Թարգմ. . . . 40 կ.
Իս. Յարութիւնեանի. . . . 15 կ.
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Ա. Եզեկեանի.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ . . . 20 կ.
РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . 20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի . . . 25 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղջ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղջ կը լինի միայն 25%.

(6) 0—8

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ իրաւունքներով և
ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Բացվում է փետրվարի 10-ից [illegible]
Պարապմունքները [illegible] երեկոյեան ժամը 7-ից. [illegible]
[illegible]
I Тумановская ул. (въ началѣ Черкезовской ул.) с. д. № 13.
(Հ. Հ. Կ.) 64. 10—10
40

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.